

27501

Ա. Ա.

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Յ Ե Վ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆ. ՀՀ  
ԴՐԱՅՈՒԹՅԱՆ  
Հանձնումն ԽԱՅ  
СССР

---

---

ԽԱՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐՈՎԿԶՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՍԽՈ. ԿՈՎԿԱՍԻ  
Յ Ե Ր Կ Ր Ա Ց Ի Ն Բ Ա Ժ Ա Ն Մ Ո Ւ Ք

---

---

336.2

4-11

Թ-ՊՍՅՈՎ-Դ-ՊՆ

1 9 3 0

336-2  
h-11

15 JAN 2010

C 31-K  
1100  
646

ԳՐՈՂԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

Ա. Ա.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՅԵՎ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՑԻԱԼԻՍԱԿԱՆ ՎԵՐԿՎԱԼՈՒՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԵՎՏՈԽՈՎԱՅԻ  
Պատմության  
Համակարգչական  
Կենտրոն  
ՀՀ

ԽՈՀԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՄԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պ-ՊՈՏՈՎ - Դ-ԴՆ  
1 9 3 0

№ 01. 2013

Ա. Ա.

# СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕКОНСТРУКЦИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА И ЕДИНЫЙ СЕЛЬХОЗНАЛОГ

на армянском языке

ИЗДАНИЕ СЕВ.-КАВ. КРАЕВ.  
ОТДЕЛЕНИЯ ЦЕНТРОИЗДАТА



59732-66

Газетно-Книжная типография Сев.-Кав. Полиграфоб'единения. Ростов на Дону  
Крайлит № 09/166 Заказ № 631 Тираж 1500

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՅԻՇԼԻՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային իշխանության գոյության ընթացքում գյուղատնտեսական միասնական հարկը տնօրինվել է և վերափոխվել այնպես, որ միշտ նպաստակ է ունեցել գյուղում կուսակցության քաղաքականությունը կիրառելու, իրազործելու կուսակցության և Խորհրդային իշխանության հերթական խնդիրները։ Գյուղատնտեսական միասնական հարկը, վորպես գասակարգային հարկ, միշտ ծառայել է և պիտի լինի մի դրական միջոց՝ գյուղի սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունները ղեկավարելու։ Գյուղում սրվող գասակարգային կովի պայմաններում, պրոլետարիատի գիլտատուրայի ձեռքում գյուղատնտեսական հարկը մի սուր միջոց է, վորով Խորհրդային իշխանությունը ջախջախում է կապիտալիստական շահագործության հենակետ—կուլակների բոլոր հակախորհրդային և կեղեքիչ ծրագիրները։

Գյուղատնտեսական հարկի քաղաքական և անտեսական նշանակությունն ավելի բարձր է, քան նրա գերբարեական բյուջեի մեջ։ Վորպեսզի պարզ լինի, թե ի՞նչ չափով գյուղատնտեսական հարկը կարող է ապահովել կիրառվելով կյանքի մեջ, իր վրա դրված քաղաքական և անտեսական խնդիրները, անհրաժեշտ է համառոտ կերպով ծանոթանալը։ Թե ի՞նչ հերթական խնդիրներ կան դրված նրա առաջ և ի՞նչպես ե լուծել և իրազործել գյուղատնտեսական հարկը այդ խնդիրները։

Առաջին՝ չքավորին միանգամայն ազատել հարկից, զգալի չափով թեթևացնել միջակի հարկատվությունը և այնպես ուժեղացնել հարկը կուլակների վերաբերմամբ, որ դրականապես

արգելել նրանց աճելուն և ընդհակառակը, նպաստել նրանց թուլանալուն:

Յերկրորդ՝ ուժեղացնել միասնական հարկի դերը, վորպես զյուղատնտեսության զարգացման մի միջոցի, մասնավորապես լայնացնելու ցանքսերի տարածությունը, բարձրացնելու բերքատվությունը և հացահատիկների ապրանքային արտադրության ավելացումը:

Յերրորդ՝ նպաստել գյուղի չքավոր և միջակ լայն մասսաների համախմբմանն արտադրական կոռպերացիայի մեջ:

Ի՞նչպես են կիրառված կյանքի մեջ այդ խնդիրները:

Չքավոր գյուղացիությունը գյուղատնտեսական հարկից միանգամայն ազատված է յեղել: Որենքով պիտի ազատվեր Միության ամբողջ գյուղական տնտեսությունների 35 տոկոսը, իսկ փաստորեն ազատված են հարկից 9,2 միլիոն գյուղական տնտեսություններ, վոր կազմում է 36,4 տոկոս: Ազգային հանրապետություններում և շրջաններում գյուղատնտեսական հարկից ազատված տնտեսությունների տոկոսը հասնում է 50—70%-ի:

Ուրեմն, ինչպես տեսնում եք, պատգամը կատարված է լրիվ կերպով:

Կուսակցության 16-րդ կոնֆերենցիայի վորոշումը—միջակ գյուղացիության վերաբերյալ գյուղատնտեսական հարկը պակասեցնել զդալի չափով—նույնպես կիրառված է բարգարար չափով:

Պակասեցրած հարկի ընդհանուր գումարը պիտի լիներ 50 միլիոն ռուբլի, մինչդեռ հարկի պակասեցումը միայն միջակ գյուղացոց վերաբերյալ կազմում է 60 միլիոն ռուբլի:

Բացի զբանից, կատարած ստուգումը ապացուցեց, վոր իրապես միջակ գյուղացիության մեծ մասը հարկն անցյա տարվանից պակաս է վճարել: Նրա մի փոքր մասը հարկը վրա մասը է նույն չափով, ինչքան, վոր անցյալ տարի և մի չընշին մասը վճարել է ավելի, քան անցյալ տարի, այն ել այն պատճառով, վոր նրանց յեկամուտը այս տարի համեմատաբար ավելի յե յեղել քան անցյալ տարի:

Ստուգումը ցույց տվեց, վոր կուլակները ճիշտ կերպով են հարկվել:

Անհատական ձևով հարկված կուլակների տնտեսությունը և նրանց յեկամտի ընդհանուր գումարը, համեմատած անցյալ տարվա հետ, ավելի ճիշտ է ցուցակագրված և ընդգրկված, վորի պատճառով և հարկի ընդհանուր գումարը, համեմատած առաջիկա տարվա հետ, մեծացել է:

Անցյալ տարի անհատական ձևով հարկված կուլակային բոլոր տնտեսությունները կազմում եյին 0,9 տոկոս: Հաշվետու տարում նրանք կազմում են 2,4 տոկոս: Յեկամտի ընդհանուր գումարը 1928-29 թվին կազմում եր 257 միլիոն ռ., 1929-30 թ. կազմում է 536 միլիոն ռուբլի:

Հարկը 1928-29 թ. կազմում եր 56 միլիոն ռուբլի, 1929-30 թ. կազմում է 102 միլիոն ռուբլի: Ինչպես տեսնում եք, այս դեպքում ևս վորոշումը կատարված է ճշտությամբ:

Իհարկե, չի կարելի ասել, վոր բոլոր կուլակային տնտեսությունները հաշվի յեն առնված: Անկասկած, չնայած բավար հաշվաման, դեռևս շատ կուլակային տնտեսություններ աչքաթող են ամբողջ յեկամուտը հաշվի չի առնված, հետևապես և չի հարկված: Այս հանգամանքը պիտի ի նկատի ունենալ այս տարվա հարկման ժամանակ:

Անկասկած և, վոր անցյալ տարվա գյուղատնտեսական միասնական հարկը նպաստում եր գյուղատնտեսության աճման, ցանքսերի տարածության ընդարձակման և բերքի բարձրացման:

Ստուգումը ցույց տվեց, վոր անցյալ տարվա որենքի համաձայն, հարկից ազատված է մինչև 5 միլիոն հեկտար ցանքերի այս տարվա աճը, վոր տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններ, չնորհիվ կիրառած ազրումինիմումի, ցանքսերի ընդարձակման և բերքի բարձրացման, ստանում են որենքով սահմանված արտոնություններն ու զիջումները:

Այս բոլորի գումարը ցույց է տալիս, վոր կուսակցությունը իր քաղաքականությունը գյուղում տանում է ճշգրիտ

հետեւղական ուղիով, գյուղատնտեսության բարձրացման դարձ տալով և սոցիալիստական հաստատ ճանապարհով:

## ՆՈՐ ՈՐԵԿՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽԱԳԻԲՌԵՐԸ

Այս տարի գյուղատնտեսական միամնական հարկի որենքը նորից փոխվում է և նրա առաջ դրված են ավելի նշանավոր և խոշոր խնդիրներ:

Որենքը փոխվում է համաձայն այն խոշոր և նշանավոր փոփոխությունների, վոր ունեցել ե այս մի տարրվա ընթացքում գյուղացիական կյանքը: Զքավորների ու միջակների հիմնական մասսան, համոզվելով մասր և անհատական տնտեսության անողուտ և անույժ լինելում, լայն հոսանքներով շարժվեց դեպի կոլեկտիվ տնտեսությունները:

Այս տարրվա գարնանը Խորհրդային Միության տնտեսությունների համարյա կեսը մտավ կոլեկտիվ տնտեսությունների մեջ: Հսկայական շրջաններ սկսեցին միանալ կորտնատեսությունների մեջ, վորպեսզի կոլեկտիվի, արտելների, ընկերակցական, համայնական աշխատամքի միջոցով գյուղատնտեսության դրությունը բարելավեն, ապրանքային մասը շատացնեն և մեծ քայլերով առաջ շարժվեն կուլտուրական ճանապարհով:

Պատմական մեծ նշանակություն ունեցող այս փոփոխությունները գյուղի կյանքում ինքն ըստ ինքյան պարզ ե, վոր չեյին կարող չունենալ իրենց վճռական ներգործությունը գյուղատնտեսական միամնական հարկի կառուցման և նրա նոր ձևակերպության վրա:

Գյուղատնտեսական միամնական հարկի պլանվոր դերը կայանում է նրանում, վոր նրա գասակարգային ուղղության շնորհիվ, շնորհիվ նրան, վոր նա գյուղում մի դրական միջոց ե գյուղի սոցիալ-տնտեսական փոխարարերությունները, պրոցեսները դեկավարելու—այժմս ել նրա վրա յե դրված կուսակցության և Խորհրդային իշխանության առաջադրած խընդիրների հաջող իրականացումը գյուղում:

Այդ հիմնական խնդիրները հետեւյալներն են.—

Առաջին—գյուղում լայն կերպով ծավալվում է կոլեկտիվացումը: Կոլեկտիվացումը պահանջում է հարկման նոր ձևեր և նոր սիստեմ, քանի վոր հին սիստեմը հիմնված եր անհատական տնտեսության շահագործման ձեի վրա:

Կոլեկտիվացման հսկայական չափը անհրաժեշտ դարձրեց գյուղատնտեսական հարկը վերակազմել այնպես, վոր նա նրա պատուե կոլեկտիվացման զարգացման և ամրանալուն: Նոր ուրենքի մեջ մի շարք փոփոխություններ կան, վորոնց նպատակն է թեթևացնել կոլտնտեսությունների հարկը, այսինքն այն գյուղացիները, վորոնք մտել են կոլտնտեսությունների մեջ, հարկ վճարեն շատ պակաս, քան նրանք վճարել են անցյալ տարի, կոլտնտեսություններից գուրս յեղած ժամանակ:

Նոր որենքը կոլտնտեսություններին տալիս է մեծ արտոնություններ իրենց անտեսությունները բարձրացնելու և լայնացնելու գեղքում, ցանքսերը մեծացնելու, անսառններին շատացնելու, տեխնիկական կուլտուրաներ ցանելու, ազրումինիմումը, զոոմինիմումը կիրառելու գեղքում:

Յերկրորդ—համատարած կոլեկտիվացման շրջաններում արագացնել կուլակների, վորպես գասակարգի լիկվիդացիան, կավիտալիստական ելեմենտների վրա հարձակումը շարունակելով, միենույն ժամանակ ուժեղացնել և ընդարձակել սոցիալիստական համատարած արշավը մեր անտեսության բոլոր ընապակում: Գործնականորեն սա նշանակում է, վոր այնտեղ գավառում: Գործնականորեն սա նշանակում է, վոր այնտեղ վորտեղ կուլակները լավ չեն հարկված, ավելի պիտի ուժեղացնել կուլակների անտեսության հարկումը, սահմանափակելով միանգամայն նրանց հետագա աճումը:

Յերրորդ—շարունակել սկսած գործելակերպը, նպաստելով գյուղատնտեսության բարձրացման և աճին, առաջին հերթին այն տեսակների, վորոնք իրենց զարգացման ընթացքում ավելի յետ են մնացել և վորոնք շատ կարևոր են մեր արդյունաբերության համար:

Դա նշանակում է, վոր որենքը հնարավորություն է տալիս կոլտնտեսություններին, արտելներին, ընկերություններին լայնացնել ցանքսերը, առանց վախճանալու, վոր հարկը կբարձ-

րանա նրանց մեծացած տնտեսության ավելացած յեկամուտի վրա, քանի վոր հարկը նրանց վերաբերյալ պիտի հաշվի համեմատական ձեռվ և վոչ պրոգրեսիվ, այսինքն նրանց ունեցած յեկամուտի համապատասխան և վոչ աստիճանաբար աճող ձեռվ:

Շատ հավանական է, վոր հետագայում կսահմանվեն տարբեր տոկոսներ վորոշ ձեռվ և տիպի կոլտնտեսությունների վերաբերյալ, սակայն քանի վոր կոլտնտեսությունները կազմակերպչորեն դեռևս չեն ձեակերպված վերջնականապես, այդ պատճառով ինդիրը հեշտացնելու համար սահմանված և մի վորոշ ցածր տոկոս, այն ե՝ կոմունաների համար 4 տոկոս, իսկ մյուս բոլոր կոլեկտիվ ձեռերի համար—5 տոկոս:

Հարկը հաշվվում է և վերցվում վոչ թե ամեն մի կոլտընտեսության անդամից, այլ ամբողջ կոլտնտեսությունից: Արտեխների և ընկերությունների այն անդամները, վորոնք գեռ ևս պահել են իրենց տնտեսության վորոշ մասը անհատապես ոգտագործելու, կյենթարկվեն հարկման առանձնապես և պետք ե ասել, վոր համեմատաբար հարկը բարձր կլինի նրանց վրա, այնպես վոր կոլտնտեսության ամեն մի անդամ, վորոն ունի անհատապես ոգտագործելու վորոշ տնտեսություն, չպետք ե խրտնի այդ հարկումից: Ինքն ըստ ինքյան պարզ է, վոր ամեն մի դեպքում, յերբ կոլխոզնիկն իր անհատական տնտեսությունը ընդհանուր կարգով մտցնե կոլխոզի գույքի մեջ, կազմակի այդ ձեռվ հարկումից:

Կոլտնտեսությունների հարկը անհամեմատ ավելի քիչ կրկնի, քան միջակ գյուղացիությանը: Այն կոլտնտեսությունները, վորոնց յեկամուտը, մարդագույն հաշված, կկազմի մինչև 30 ոռութիւն, միանդամայն ազատվում են հարկումից, իսկ այն կոլտնտեսությունները, վորոնց ընդհանուր յեկամուտը, չնայած 30 ոռություց վեր ե, սակայն կոլտնտեսությունների մեջ կան շատ չքաղոր տնտեսություններ, վորոնք անցյալ տարի ազատված ենին հարկից, վորպես տնտեսապես թույլ, անկարող տրնտեսություններ: ստանում են մեծ զիջումներ և հարկը պակասում ե զգալի:

Անցյալ տարվա որենքով սահմանված բոլոր արտօնություն-

ները—ցանքսերի ընդարձակման, բերքի բարձրացման՝ մնում են նույնությամբ:

Նոր որենքով մեծ արտօնություններ և զիջումներ են տրըգում անասնաբուծությունը զարգացնելու դեպքում:

Այդ արտօնություններն են՝ առաջին—անասունների աճը անցյալ տարվա համեմատ հարկվում և կիսով չափ պակաս, յերկրորդ—կովերի հարկվումը յուզ պատրաստող ուայոններում նույնպես իշեցվում է կիսով չափ: Խողաբուծությունը միանգամայն ազատվում է հարկից:

Բացի այդ բոլորից, շատ մեծ նշանակություն ունի անասնաբուծության աճին նպաստող բոլոր սննդատու պտուղների և խոտերի հարկից ազատվելը:

Ինքն ըստ ինքյան պարզ է, վոր այդ արտօնությունները պիտի նպաստեն սննդատու բույսերի ցանքերի ավելացման, ընդարձակման, վորով և զարկ պիտի տան անասունների աճին:

Որենքով արտօնություններ ե տրվում նմանապես կոլտնտեսությունների, արտեխների, ընկերությունների անասնաբուծության աճին նպաստող նախաձեռնությունների համար:

Ոյժմ ահենենք, թե ի՞նչ գրության մեջ են մնում վոչ-յերկրագործական յեկամուտները:

Մինչև որս հարկվում եր գյուղացիական տնտեսությունների բոլոր աղբյուրներից ստացած յեկամուտը, նույն թվում և վոչ-յերկրագործական յեկամուտը:

Վոչ-յերկրագործական յեկամուտը հարկվում եր ավելի պակաս, քան յերկրագործական յեկամուտը, վորովինեան հաշվի յերանվում նրա չնշին մասը միայն: Վերջին ժամանակներս ծավալվող շինարարության և յերկրի ինդուստրացման շնորհիվ զյուղը միլիոնավոր յեկամուտներ ե ստանում և այդ պատճուղի որենքով վոչ յերկրագործական յեկամուտների վրա հարկը փոքր ինչ բարձրացրած ե: Աշխատավարձը հաշվի յեանվում անցյալ տարվա չափով և մնում ե անփոփոխ: Մի քիչ ավելացվում ե տնայնագործության և արհեստագործական աշխատանքներից ստացված յեկամուտների նորման:

Գյուղատնտեսական միասնական հարկի նոր որենքը առանձնահատուկ նշանակություն ունի մեր Հյուսիսային կովկասի համար, վորն իր կովկասիվացումով ավելի առաջ ե զբնում Միության ուրիշ յերկրամասերից: Գյուղատնտեսական միասնական հարկի անցյալ տարվա կիրառման գործնական հետեւնքներ պերճախոս կերպով ապացուցեցին, վոր մեր առաջ դրած խնդիրներն այդ բնագավառում իրագործված են բավարար կերպով:

Միջակ գյուղացիության հարկի գգալի թեթևությունը, չքավորության հարկից միանգամայն ազատվելն իսկապես վոր խթան յեղան ցանքսերի ավելացման, ինչպես ամբողջ Միության մեջ, նույնպես և Հյուս. Կովկասում, ուր ցանքսերի տարածությունն աճել է, համեմատած անցյալ տարվա հետ, 17,4 տոկոսով:

Համաձայն գյուղատնտեսական հարկի որենքի տված արտոնությունների, Հյուսիսային Կովկասում գյուղատնտեսական հարկից ազատվում են 1.222.000 դեսյատին ցանքսերի տարածության աճը, խոպան հողերում յեղած ցանքսերը: Բացի դրանից—55.000 դեսյատին տեխնիսական կուլտուրաները: Ազրոմինիմումի համար արտօնություններ և զիջումներ են ստացել 282.000 տնտեսություններ, տասնյակ հազար տնտեսություններ ստանում են արտօնություններ յուղագործության համար:

1928-29 թվին գյուղատնտեսական միասնական հարկի կամպանիայի ժամանակ հարկված կուլակային տնտեսությունները կազմում են ամբողջ տնտեսությունների 1,7 տոկոսը, իսկ այս տարի, շնորհիվ կուլակների տնտեսությունների լիվ հայտնաբերության, նրանց թիվը կրկնապատկվում է և հասնում 2,9 տոկոսի: Այն արտօնությունները, վորոնք արված եյին կուլեկտիվ տնտեսություններին, պարզ ե, վոր նպաստում են նըրանց լայնանալուն և համեմատած անցյալ տարվա հետ, կոլտնտեսություններում յեղած տնտեսությունների թիվը 7-անգամ ավելանում է, մեծանում:

Այդպիսով անցյալ տարվա հաջողությունները գյուղատնտեսության մեջ, այն ե՝ ցանքսերի լայնացումը, ազրոմինիմու-

մի կիրառելը, մասամբ կարելի յե ասել վոր հետեւանք եյին գյուղատնտեսական հարկի տված արտօնությունների, վոր որենքով արված եյին չքավոր և միջակ գյուղացիության և կոլտնտեսություններին:

Յեթե անցյալ 1928-29 հարկային տարում միջակները միջին հաշվով Հ.-Կովկասում վճարում եյին մի ոռւբլի յեկամուտից 8 և կես կոպեկ հարկ (առանց ուներների), իսկ ուներների հետ—9 և կես կոպ., այժմ կոլտնտեսություններում, վորտեղ նրանք գտնվում են չքավորների հետ միասին, պիտի վճարեն միայն 5 կոպ. մեկ ոռւբլի յեկամուտից:

Այս բնորոր արտօնություններն ավելի ևս լայնանում են 1930 թ. ապրիլի 2-ի և 23-ի որենսդրությամբ: Ապրիլի 2-ի որենքը կոլտնտեսությունների լծկան և արդյունավետ խոշոր ու մանր անասունները ամբողջովին ազատում ե հարկից 2 տարվա ընթացքում: Այդ որենքը 2 տարով ազատում ե հարկումից նաև այն արդյունավետ խոշոր ու մանր անասուններին, վորոնք կոլտնտեսությունների անդամների անհատական սեփականությունն են կազմում—կովերին, հորթերին, վոչխարներին, այձերին, խոզերին, նույնպես և թռչուններին:

Ապրիլի 2-ի որենքը տալիս ե մե շարք ուրիշ արտօնություններ և կոլտնտեսություններին և նրանց անդամներին: Այդ արտօնությունների գումարը մոտավորապես հաշված, հարկը պակասեցնում ե մեր Հ.-Կովկասում մինչև 2 միլիոն ոռւբ:

Այս արտօնությունները արվում են միայն կոլտնտեսություններին և նրանց անդամներին:

Բացի դրանից, ապրիլի 23-ի որենքը նոր արտօնություններ տալով կոլտնտեսություններին, կիսով շափ պակասեցնում է յեկիպատացորենի և արևածաղկի հարկը, իսկ Հ.-Կովկասում—նաև կթավատի և կանեփի հարկը: Այդ նույն որենքով 30 տոկոսով կրծագում են սահմանված յեկամտի նորմերը կոլտնտեսությունների պաղատու՝ այգիների, խաղողի, ծխախոտի և մախորկայի համար:

Այս բնորոր, իհարկե, ավելի ևս պակասեցնում ե կոլտնտեսությունների գյուղատնտեսական հարկը: Նոր որենքն աշքա-

թող չի անում չքավոր և միջակ գյուղացիական անհատական տնտեսությունների շահերը, վորոնք դեռ ևս չեն մտել կոլտընտեսությունների մեջ։ Այսպես որինակ, անհատական չքավոր գյուղացիական տնտեսություններն ամբողջովին ազատվում են հարկից, ինչպես առաջ։ Միջակ անհատական տնտեսություններն ստանում են բոլոր այն արտօնությունները, վորոնք տալիս են նրանց փետրվարի 23-ի որենքը։ Իհարկե, համեմատած կոլտնտեսությունների հետ, անհատական ընտանիքները ավելի քիչ արտօնություն ունեն, քան կոլեկտիվ տնտեսությունները։

Շատ պարզ ե, վոր կուլակներն անբավական են գյուղատնտեսական հարկի որենքից, մանավանդ վերջին յերկու տարիների հարկումից, վորի ծանրությունը զլխափրապես ընկառում է նրանց վրա և միանգամայն զինաթափ անում նրանց, յերբ միջակը ստանում է առանձին արտօնություններ, թեթե՛ վություններ, յերբ որենքը չքավորներին ամբողջովին ազատում է, հսարավորություն տալով նրանց տնտեսապես կազմակերպվելու, ամրանալու և վոչ մի գեղքում վիզը չծռելու կուլակի առաջ։ Զքավորների, բարակների և միջակների համերաշխ աշխատանքը կոլխոզներում, կոլխոզների և սովխոզների աճն ու ամրանալը միանգամայն անհանգստացնում է կուլակներին։

1927 թվին կուլակներն ունեին 17 միլիոն հեկտար ցանքս, այժմ կոլխոզներն ու սովխոզները ունեն 33 միլիոն հեկտար ցանքս և տալիս են կուլակների փոխարեն 130 միլիոն փութ հաց։ Կուլակներն այժմ զինաթափ են յեղել իրենց ազիտացիան առաջ տանելու գյուղացիության մեջ, կոլխոզների և սովխոզների դեմ, ամենավասար պրովոկացիոն միջոցներ գործադրելով, գրգռելով գյուղացիության։

Սակայն այդ բոլորն իրենց զլխին անդրադառնալով, նրանք չեն դադարում հանգամանջից ոգավել։ Ոգտվելով մեր ներկա մատակարարման դժվարություններից, սկսում են պրովոկացիան ամեն միջոցներով գայրացներ, գրգռելով գյուղացիության, համարելով կոլեկտիվացումն, ինչպես կոխվը մասնավոր սեփականության դեմ, գյուղատնտեսական անհատական շահագործման հին ձեռքի դեմ՝ բոլոր չարիքների, բոլոր դժվարությունների պատճեռը։ Զնայած այս ասեկուեների պրովոկացիոն բնույթ-

թին, աշխատավոր գյուղացիության մեջ, բանվորության շարեկերում գտնվում են մարդկիկ, վորոնք պաշտպանում են այդ տեսակետները, նրանց տարածման, հասարակական կարծիք ստեղծելուն, տրամադրության, մինչև իսկ ակտիվ գործունեյությամբ։

Նրանք դեմ են մեր վճռական, կտրուկ գործելակերպին, նրանց կարծիքով ավելի լավ և համակերպվել. «ինչ կարիք կակուլակի քեֆին կոչելու, չի՞ վոր նա լավ «խաղեյին» ե և ոգուտ և տալիս մեզ», «հարկավոր ե թեթևացնել նրա հարկը, չճնշել նրան և հնարավորություն տալ նրան մեծացնելու իր տնտեսությունը»։

Այս ոպորտունիստական տեսակետը, կարծիքը կարող են ունենալ և պաշտպանել միայն նրանք, վորոնք կամ չեն գիտակցում, կամ կուրորեն չեն տեսնում այդ տեսակետի վասարարությունը և վորոնք կուլակների սպասարկողներն են, նրա կեղեքիչ գործերի ծածկողը՝ կոլխոզների դեմ, մեր սոցիալիստական շինարարության դեմ, հնգամյակին սարուտած անող և հույսը դրած իմպերիալիստների ինտերվենցիայի վրա, պրոլետարիատի դիկտատուրայից ազատվելու, բուրժուական կարգեր սահմանելու, այսինքն ֆարբիկան կապիտալիստին, հողը պոմեշչելիին—կուլակին։ Այս նրանց տեսակետի գարգացման վերջակետը։

Բայց և կան այնպիսիները, վորոնք վորոշ գեպերում ավելի, ձախ են գնում իրենց գործելակերպի մեջ՝ կրծատում որենքով չքավորների 35 տոկ. հարկից ազատվելը և միջակների վրա հարկը ծանրացնում անհատապես, կուլակների վորպես դասակարգի լիկվիդացիայի գեղքում միջակներին ել միացնում նրանց հետ, կարծելով թե մեծ ոգուտ են տալիս Խորհրդ. իշխանության, մինչդեռ զրանով արջի ծառայություն են մատուցում։ Այդ պատճառով ել դասակարգային կովի մաքուր զիծը տանելու համար, պետք ե անհաշտ կոփի հայտարարել ամեն տեսակ ոպորտունիստներին, թե աջ թեքման և թե ձախ խոտորումներին, վորոնք միանգամայն վսասակար են մեր սոցիալիստական շինարարության համար։

Անհրաժեշտ ե կոխվը սրել այդ ոպորտունիստական վսա-

սակար թեքումների գեմ, մանավանդ կրակն ուժեղացնելով աջ թեքման գեմ, վոր ավելի վտանգավոր է, քանի վոր արտահայտում և կուլակային տեսակետը և նպաստում և նրա ընդարձակման:

Անհրաժեշտ ե այս նշանավոր բնագավառում, գյուղատնտեսական նոր հարկը կիրառելով կլանքի մեջ, պահել նրա գասակարգային ճիշտ իմաստը, եյությունը և հետևողականորեն ու անհողղող առաջ տանել կուսակցության հիմնական գիծն, անխնա հարգածելով կուլակին, ամբողջապես ազատելով չքավոր անտեսությունները հարկից և զգալի չափով թեթևացնելով միջակների հարկը, աչքաթող չանելով անհատական տնտեսություններին, պլոյետարիատի դիկտատուրայի նոր և ամուր հենակետ ունենալով գյուղում կոլխոզնիկին:

Գյուղացիական հարկն այնպես ե կազմված, վոր հնարավորություն և իրավունք ե տալիս տեղերին հարկը հեշտությամբ անցկացնելու: Դրա համար անհրաժեշտ ե, վոր տեղական կազմակերպությունները նախ և առաջ կազմակերպեն հարկի բացատրական կամպանիան, կազմակերպեն գյուղի հասարակական կարծիքը, գյուղական ակտիվը, հարկի նոր որենքը կիրառելու համար, հակառակ դեպքում բոլոր թուլություններից և թերություններից պիտի ոգտվի գարճյալ մեր դասակարգային թշնամին—կուլակը:

Անհրաժեշտ ե բացատրել ամեն մի գյուղացուն, ամեն մի կոլտնտեսության՝ գյուղատնտեսական հարկի այս և անցյալ տարվա որենքի տարբերությունները, նոր որենքի նշանակությունը, ի՞նչ նոր խնդիրներ են դրված նոր որենքի առաջ և ի՞նչ պիտի իմանան ու կատարեն ամեն մի կոմունիստ, կոմյերիտական ու ակտիվիստ:

Այժմ անհրաժեշտ ե անհապաղորեն կատարել այդ, վոր գյուղացին իմանա իր հաշիվը, տեսնի և զգա տարբերությունը կոլտնտեսության և անհատական տնտեսության մեջ, գիտակցիքերքի բարձրացման, ցանքսերի լայնացման, մաքուր, զտված հացահատիկներ ցանելու առավելությունը և նրա մեծ նշանակությունը, վոր նա կարողանա դաշիք տարվա իր տնտեսական ծրագիրը կազմելիս պարզ հաշիվ տալ իրեն, թե վորն ե ձե-

որնտու—մուալ կոնսերվատիվ կերպով պապենական անհատական տնտեսության շրջանակների մեջ, թե չախչախելով, քանզելով այդ փթած շրջանակները, բոնել սոցիալիստական կուկտիվ անտեսության լայն ուղին:

## Ի՞նչոր ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՅՈՒՂԱՏՆԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Գյուղատնտեսական միասնական հարկը, ինչպես յեկամըտային և ուրիշ հարկերը, պետք ե պետության նրա համար, վոր պետությունը կարողանա իր ծրագրերն իրագործել, իր ծախսերը հոգալ: Ի՞նչ ծրագրներ և ծախքեր ունի պետությունը: Պարզենք: Նախ՝ անհրաժեշտ ե պրոլետարիատի իշխանությունը պահպանել, ամրացնել և ուժեղացնել նրան ոգտագործելով գուրգուային, կուլակներին ձնշելու համար, շահագործության գեմ կովելու, հաստատ կապ ստեղծելու ուրիշ յերկրների բանվորության հետ:

Հարկավոր ե ամեն միջոցներով աշխատավոր և շահագործվող մասսաներին ազատել բուրժուազիայի կախումից, ներգործությունից, կապել նրան պրոլետարիատի հետ և լայն չափով մասնակից անել սոցիալիստական շինարարության: Անհրաժեշտ ե ոգտագործել պրոլետարիատի իշխանությունը սոցիալիզմ կառուցելու համար, դասակարգերը վոչնչացնելու և անցնելու մի հասարակական ձևի—առանց դասակարգերի և առանց պետության:

Հետո, վորպեսզի կարգածատերերը, կապիտալիստները իմպերիալիստական պետությունների, ֆաշիստների, սոցիալ-դեմոկրատների ոգնությամբ չհարձակվեն մեզ վրա և յետ շլոեն գյուղացիների հողերը, մեր ֆաբրիկաներն ու գործարանները, պետք ե լինել ուժեղ և պատրաստ՝ յետ մղելու նրանց հարձակումները, զիմագրելու նրանց և պահապան կանգնելու Խորհրդային Միության ու նրա սոցիալիստական շինարարության, վորի համար մեզ հարկավոր ե զորք:

Հարկը պետությանը հարկավոր ե նրա համար, վոր նա կարողանա զարգացնել մեր խոշոր արդյունաբերությունը, վորը

շատ անհրաժեշտ ե մեր տնտեսության զարգացման համար: Խոշոր և մեծամեծ գումարներ ծախսվում են ծանր արդյունաբերության վրա: Յեզ դա հարկանալի յէ: Արևմտյան Յեզը պայից մենք յետ ենք մնացել հենց այն պատճառով, վոր մեղանում արդյունաբերությունը զարգացման ցածր աստիճանի վրա յէր, իսկ մեզ հարկավոր ե նրան արագ և լայն չափով զարգացնել:

Յեթե մենք այդ չանենք, ստիպված կինենք շարունակել արտասահմանից գնել և բերել մեքենաներ, տրակտորներ, կոմբայններ և այլն: Այդ կնշանակեր, վոր մենք վոչ միայն նրանց չենք կարող հասնել ու անցնել այլ և միշտ կախված կինենք նրանցից և նրանց յենթակա, ինչպես Զինաստանը, Պարսկաստանը կամ Հնդկաստանը: Այդ պատճառով և անհրաժեշտ ե առաջնին խսկ հերթին արագ և ուժեղ թափով զարգացնել մեր արդյունաբերությունը, ծախսել մեծամեծ գումարներ մեքենաներ պատրաստող մեր ծանր արդյունաբերության վրա, վոր հարավորություն ունենանք մեր յերկիրը ինդուստրացման և ելքարարության յենթարկելու:

1928-29 թվին Խորհրդային իշխանությունը արդյունաբերության զարգացման համար ծախսել ե հսկայական գումարներ, այն ե՝ 2 միլիարդ 750 միլիոն ռուբլի, իսկ 1929-30 թվին՝ 4 միլիարդ 087 միլիոն ռուբլի:

### ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԵԼ ՅԵՎ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարկը պետությանը հարկավոր ե զյուղական տնտեսությունը վերակառուցելու, ուժեղացնելու և նոր, կոլեկտիվացման ձանապարհով զարգացնելու: Պետությունը անմիջապես զյուղատնտեսության համար ծախսում և մեծամեծ գումարներ և տարեցտարի այդ ծախսերը մեծանում են: Բերենք թվական տվյալներ այդ ծախսերի մասին:

1925-26 թ. պետությունը ծախսել ե զյուղատնտեսության համար 450 միլիոն ռուբլի

1926-27 թ. » 550 » »

1927-28	»	»	800	»	»
1928-29	»	» 1 միլիարդ	724	»	»
1929-30	»	» 3 միլիարդ	302	»	»

Այս թվերն ամենապերճախոս կերպով ապացուցում են Խորհրդային իշխանության հոգատար վերաբերմունքը դեպի գյուղատնտեսությունը:

### Ի՞ՆՉԻ ԵՎ ԹԱՐԱՍՈՒԹՅՈՒՆ ՄԵՇՔ ՄԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՐԱՔԻ ՀԱՄԱՐ

Ինչպես կենինն ասել ե՝ «մեզ հարկավոր ե սովորել և սովորել»: Աւրեմ մեզ հարկավոր են դպրոցներ, ընթերցարաններ, դասընթացքներ, լրագրություն, արհեստագուցներ և այդ բոլորն այժմ մեզ հարկավոր ե ավելի մեծ չափով, քան առաջ, վորովինեան ցարի և կապիտալիստների կազմություններ իշխանությունը համար ձեռնտու յեր աշխատավոր մասսաներին պահել խավարի մեջ իսկ այժմ, խորհրդային կարգերում, ու հարկավոր ե վորքան կարելի յե լայն մասսաների գլագիտությունն, վորքան կարելի յե շատ լուսավորությունն:

5

Նույնպես անհրաժեշտ են բժշկական ոգնությունն, հիվանդացներ, սանատորիաներ, կուրորտներ, սոցիալական ապահովությունն: Այդ բոլորի համար հարկավոր են խոշոր գումարներ և Խորհրդային իշխանությունը այդ սոցիալ-կուլտուրական պետքերի համար ծախսել ե՝


1925-26 թ.	— 906 միլիոն ռուբլի
1926-27	— 1156 » »
1927-28	— 1397 » »
1928-29	— 3027 » »
1929-30	— 4135 » »

Այդ հսկայական գումարների խոշոր մասը ծախսվել է գյուղի կուլտուրական պետքերի համար:

### ՎՈՐՏԵՂԻՑ Ե ՄԵՐ ՊԵՏԱԿԱՐԱՔՈՒՆ ՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅԴ ՄԵԺԱՄԵՇ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ցանկացած կառավարությունը, ինչպես և այժմ շատ ու

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԻՏՈՒ  
ՏՈՒՆՈՎՑԵՆՏՐ  
Ակադեմիա Խան  
СССР



ըիշ բուրժուական պետություններ, իրենց արդյունքների մեծ մասը ստանում եր արտաքին փոխառությունների միջոցով։ Այդ ճանապարհը մեղ համար փակ եւ կապիտալիստական պետությունները մեղ փոխառություն չեն տա, քանի վոր վոչ մի գեղքում նրանց ձեռնուու չե մեր տնտեսության ամրապնդումը։

Խորհրդային իշխանությունը իր պետական յեկամուտները ստանում ե յերկրի ներսում յեղած աղբյուրներից, այն ե՝ արդյունաբերությունից, ներքին փոխառություններից և հարկերից։

Իհարկե, չպետք ե կարծել վոր Խորհրդային իշխանությունը շարունակ մեծամեծ ծախսել ե անում արդյունաբերության համար, բայց և վոչ մի կոպեկ ողուտ չի ստանում։ Այդ միանգամայն սխալ ե։ Մեր արդյունաբերությունը տալիս է խոշոր յեկամուտներ, սակայն մենք առայժմ ստիպված ենք և անհրաժեշտ ենք գտնում այդ յեկամուտները ծախսել նոր ֆաբրիկաների և գործարանների շինարարության վրա։ Որինակ, վերջին տարում (1928 թ.) մեր պետությունը արդյունաբերությունից ստացել ե 1 միլիարդ 250 միլիոն ռուբլի և այդ հակայական գումարները ամբողջապես ծախսված են նոր գործարանների, ֆաբրիկաների և եկեղորոկայանների համար։ 1929 թին արդյունաբերությունից ստացվել ե յեկամուտ 1.750 միլիոն ռուբլի, 1930 թ.—3.350 միլիոն ռուբլի։ (Վերջինը սպառվում ե մոտավորապես)։

Ինչպես տեսնում ենք, քանի զնում, այնքան մեր արդյունաբերությունը տալիս է ավելի խոշոր յեկամուտներ։ Դեռ ևս կառուցվում են հակայական գործարաններ, ֆաբրիկաներ (Մադուխտագործել Սելմաշ և այն) եկեղորոկայաններ (Դնեպրոստրոյ)։ Մի քանի տարուց հետո, յերբ այդ շինարարությունը կավարտվի և այդ ֆաբրիկաներն ու գործարանները կսկսեն գործել իհարկե արդյունաբերության յեկամուտը կըրկնապատկի, կը յեռապատկի։

Պետական յեկամտի հետեւալ աղբյուրն են կազմում ներքին փոխառությունները։ Պետությունը մի շարք ներքին փոխառություններ ե արել, վորոնց մի մասը վաղուց արդեն վճար-

ված ե, գումարներն ամբողջովին վերադարձրած։ Թվում ե, թե ինչ շահ պիտի ստանա պետությունը այդ ներքին փոխառություններից, յերբ նա ստացած գումարներն ամբողջապես վերադարձնում ե և գեռ մի բան ել ավելի—տոկոսներ վճարում։ Թվում ե, թե այդ պետությանն այնքան ել շահավետ չե։ Սակայն այդ թվում ե միայն, քանի վոր պետությունն այդ ներքին փոխառությամբ ժողոված գումարները, մինչև նրանց հատուցումը, շրջանառության մեջ ե զնում, նրանցով նախավորություն ե ունենում կատարել իր հսկայական սոցիալիստական շինարարությունը։ Այստեղ անհրաժեշտ ե յերկու խոսք ասել հնգամյակի նոր փոխառության մասին։ Հնգամյակի նոր փոխառությունը միացնում ե բոլոր մինչ այդ յեղած ինդուստրացման և գյուղացիական տնտեսությունը ամրապնդող փոխառությունները հնգամյակի միանական փոխառությամբ, վոր կոչվում ե «հնգամյակը չորս տարում»։

Առաջավոր բանվորների կոչը՝ նոր փոխառությամբ ուժեղացնեք մեր յերկրի ինդուստրացումը հնգամյակը չորս տարում կատարելու համար,—արձագանք ե գտնում և աշխատաժությամբ պաշտպանվում ե աշխատավորական լայն մասսաների կողմից։

Այդ լոգունգը նշանակում ե, վոր հնգամյակի առաջին տարվա հանրագումարները թույլ են տալիս հաստատ կերպով առաջ գնալու և արագացնելու մեծ աշխատանքների ծրագիրը։ Հնգամյակի յերրորդ տարին ժողովրդական տնտեսության շատ բնագավառներում նոր վերակատրուներ ե տալիս։ Հնգամյակի պահնը գյուղատնեսության կոլեկտիվացման համար մենք արդեն այս տարի նույնպես վերակատրում ենք։

14 միլիոն հեկտարի փոխարեն, վոր նշանակված ե մինչև հնգամյակի վերջը կոլեկտիվացման յենթարկելու, արդեն այս տարվա վերջին մենք կունենանք 40 մելիոն հեկտար։

Արդյունաբերության շինարարությունը, նոր հակաների կառուցումը նույնպես վերազանցում են հնգամյակի յեթաղթություններին։ Խարկովի և Զելյաբինսկի յերկու տրակտորների գործարանները, «Կարմիր Պուտիլովեց»-ի հետ միասին և Ստալինգրադի այս տարվանից աշխատող տրակտորի գործարանի հետ, հինգ տարվա ընթացքում կտան մինչև մեկ միլիոն

տրակտորներ: Կոմբայնների յերկու գործարանները՝ մեկը Նովրոսիսկում, մյուսը Ռոստով-Դոնում—պիտի տան 25,000, դեռ ևս մեր դաշտերում չտեսնված մեքենաներ—կոմբայններ:

Հնդամյակի յենթադրությունները մենք կդերազանցենք վոչ միայն գյուղատնտեռական մեքենաների շինարարության մեջ, այլ և արդյունաբերության մի շարք ուրիշ կարևոր ճյուղերում, առանձնապես քիմիական արդյունաբերության, նավթային և այլն արդյունաբերության մեջ:

Ինքն ըստ ինքյան պարզ է, վոր այդ բոլորն իրականացնելու համար պահանջվում ե ամենից առաջ մեր կազմակերպված լինելը, աշխատանքի տեսակերի արագությունը, սոցմերժակցությունն ու հարգածայնությունը, խորը գիտակցություն և հավատ մեր շինարարության և մեր գործակցությունն ու ոգնությունը վոչ միայն աշխատանքով, այլ և նյութապես:

Հնդամյակը չորս տարում կատարել, սա նշանակում ե ժամանակին ժողովել հացը, սերմացուն, բարձրացնել արդյունաբերության արտադրության վորակը, իշեցնել ինքնարձեքը, վոչնչացնել ճեղքվածքները, արդինպահնը կատարել լիովին, աշնանացանն անել ժամանակին, հացամթերումն ավարտել, ինայողություն անել վորքան կարելի յե շատ և այդ ինայդած միջոցները պահել պետական գրամարկում վորքան կարելի ե յերկար ժամկետով: Մասնավորապես փոխառությունների վերաբերմամբ պետք ե, վոր մեր աշխատավոր մասսան անմասնակից չմնան հնդամյակի միամական փոխառության—«հնդամյակը չորս տարում» և իրենց փոխառության տոմսերը պահ տան պետական դրամատանը — բանկին, այն պայմանով, վոր վոչ գրավ գնեն և վոչ վաճառեն մինչեվ հնդամյակի վերջը: Միմիայն այդ միջոցով և այդ պայմաններում այդ փոխառությունը կինի հնդամյակի իսկական փոխառություն, վորի մեջ կպարփակվեն վոչ միայն աշխատավորության ինայդած միջոցները, այլ և ամբողջ յեռանդն ու գործակցաթյունը մեր յերկրի սոցիալիստական շինարարության գործի հաղթության համար:

Պետության յեկամտի աղբյուրներից մեկն ել կազմում են հարկերը: Հարկերը մեր յերկրում կրում են դասակարգային

ընույթ, նրանցով մեր կառավարությունը կանոնավորում ե և շախավորում մեր յերկրում գեռ ևս գոյություն ունեցող նեպահանների, առևտրականների և կուլակների ազան և շահագիտական ձգտումները:

Գետությունը խոշոր հարկեր ե դնում առևտրականների և կուլակների վրա: Յեկամտային հարկ են վճարում ծառայողներն ու բանվորները, բացի այն բանվորներից, վորոնք ստանում են փոքր աշխատավարձ: Գյուղացիք վճարում են գյուղատնտեսական հարկ, բացի չքավորներից, վորոնք միանգամայն ազատվում են հարկատավորությունից:

## Ի՞՞ՉՈՒ ՅԵՎ Ի՞՞ՆՉՊԵՍ Ե ՓՈՓՈԽՎՈՒՄ ԳՅՈՒՂԱՏԱՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿԱՆ ՀԱՐԿ

Գյուղատնտեսական միամական հարկը փոփոխվել ե և փոփոխվում ե համաձայն այն խոշոր փոփոխությունների, վոր ունեցել ե գյուղացիական կյանքը:

1928 թվին Խորհրդային իշխանությունը հարկը փոփոխել ե նրա համար, վորպեսզի ավելի ծանր կերպով հարկե կուլակներին: Հենց այդ պատճառով սահմանվում ե հատուկ, կուլակների համար առանձին, անհատական հարկում:

1929 թվին որենքը փոփոխվում ե նրա համար, վոր թեմայնե միջակների հարկը: Բացի դրանից, սահմանվում են նոր արտօնություններ այն չքավորների և միջակների համար, վորոնք իրենց ցանքսերի տարածությունն ընդարձակում են, բերքը բարձրացնելու համար գործարում են ագրոմինիմումի պայմանները և առնասարակ, բարվոքում են իրենց տնտեսությունը: 1930 թվի գյուղատնտեսական հարկի նոր որենքն աըվելի ևս լայնացնում ե այն արտօնությունները, վորոնք նըվելի պատում են գյուղատնտեսության գարգացման:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքը թեթևացնում ե անհատական թույլ անտեսությունների հարկը:

Նոր որենքը լայնացնում է կոմունաների, արտեների և ըն-

կերությունների արտօնությունները։ Բացի դրանից, կոլտընտեսությունների անդամները, վորոնք ունեն դեռ ևս չհամայնացված տնտեսություններ, նույնպես ստանում են զիջումներ։ Գյուղատնտեսական հարկի ամբողջ ծանրությունն ընկում է կուլակների վրա։ Հարկը սահմանափակում է կուլակների տնտեսության աճը։ Գյուղատնտեսական հարկի նորորենքն ամեն կերպ խանդարում է և արգելք հանդիսանում կուլակի ցանկության՝ շահագործի չքավորներին և բարակներին։

Այս բոլորը պերճախոս կերպով ապացուցում է, վոր Խորհրդային իշխանությունը գյուղատնտեսական հարկը նրա համար ե փոփոխում, վոր չքավորների և միջակների դրությունը տարեցտարի ավելի թեթևացնի։

Գյուղատնտեսական հարկը տարեցտարի փոխվելով, ոգնում է աշխատավոր գյուղացիության կազմակերպվելու կողմանակությունների մեջ, բարձրացնելու իրենց անտեսությունը, զարգացնելու նրա յետամաց ճյուղերը, ամրապնդվելու, վոր ավելի հաջող կերպով կոլիզ մղեն կուլակների դեմ։

## ԴՅՈՒՂԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ ԴԱՍԱԿԱՐԴԱՅԻՆ ՀԱՐԿԸ

Գյուղատնտեսական հարկը դասակարգային ընույթ ունի։ Նա այնպես ե կազմված, վոր հաշվի յե առնում տնտեսությունների աշխատանքային և շահագործական ընույթը։ Գյուղացիական չքավոր անտեսությունները միանդամայն ազատվում են հարկից։ Ըստ որենքի, գյուղացիական տնտեսությունների 35 տոկ. չքավոր ընտանիքները ազատվում են հարկից։ Միջակների հարկը զգալի կերպով թեթևանում է և հարկն այնպես ե կազմված, վոր իր գլխավոր ծանրությամբ ընկնում է կուլակային շահագործող անտեսությունների վրա։ Այսպիսով Խորհրդային իշխանությունը սահմանափակում է կուլակային տնտեսությունների յելքը աշխատավորական տընտեսության սահմաններից, վորով և զրկում ե նրանց իրենց տնտեսությունները շահագործությամբ մեծացնելու հարավությունը

բությունից։ Այդ պատճառով ե, վոր Խորհրդային իշխանությունը կուլակ տնտեսությունները հարկում ե անհատական կարգով։

Այդպիսով գյուղում հարկման բաղաքականություն վարելիս մենք զեկավարվում ենք կենինի մեզ տված այն գասակարգային դասով, վորի համաձայն, միջակների հարկը զգալի կերպով թեթևանում է։ Հարկի գլխավոր ծանրությունն ընկնում է կուլակների վրա, իսկ չքավորները վոչ միայն ազատվում են հարկից, այլ և ամեն կերպ ողնություն են ստանում, իրենց անտեսությունը զարգացնելու և ամրացնելու—տնտեսապես կարող և զորեղ լինելու համար։ Այդ դրության համելու համար նրանք ընտրել են և ըսնել կուեկտիվացման ամենակարծ և հաստատ ուղին և միջակների հետ միասին հաստատ քայլերով գնում են դեպի կոլիսողները։

## ԿՈՒԼԱԿԻՆ ՊԵՏՔ Ե ԱՆԻՄԱՆ ՀԱՐՎԱԾՈԵԼ

Լենինը կուլակների մասին ասել՝

«Այդ արնախում տզրուկները պատերազմի ժամանակ ոգտվելով ժողովրդի կարիքից, շահել են իրենց հարստությունը. նըրանք հավաքել են հազարներ և հարյուր հաղարներ, բարձրացնելով հացի և ուղիղ մթերքների գները։ Այդ տղրուկները գիրանում են և հարստանում ի հաշիվ պատերազմից քայլքայգած գյուղացիների, բանվորների»։

Սակայն կուլակները միայն պատերազմի ժամանակ չե, վոր շահել են սպեկուլյացիայով իրենց հարստությունը. կուլակները կեղեքելով, հարստանարելով են գիգել իրենց հարըսլակները և վոչ իրենց աշխատանքով, այլ շահագործելով չքավորի և բարբակի աշխատանքը։ Նրանց աշխատանքով և քավորի շահագործով ե, վոր կուլակը ձեռք ե բերում այն բոլոր պիտույքները, վորոնց նենց նրանց ել ծախում և սոսկալի գներով։ Խորհրդային իշխանությունն ողնում ե չքավորներին և բարբակներին՝ ազատվելու կուլակների շահագործումից։

Նա ողնում ե նրանց այնպես վարել իրենց տնտեսությունը, վորպեսզի վերջինս արդյունավետ լինի և հնարավոր

Այսի նրանից ստանալ ավելի պիտույքներ, քան կուլակներն իրենց տնտեսությունից:

Ահա դրա համար ե, վոր կազմակերպվում են սովորողներն ու կոլլագները:

Որինակ, 1927 թ. սովորողներն ու կոլլագները տվել են շուկայի համար 35 միլիոն փութ հաց, իսկ կուլակները նույն թվականին շուկա յեն հանել 130 միլիոն փութ:

Սակայն 1930 թվին կոլլագներն ու սովորողները տալիս են ավելի քան 130 միլիոն փութ հաց: Ինքն ըստ ինքյան, պարզ ե, վոր այս տարի, յերբ կոլլագներն ու սովորողներն ավելի ևս աճել ու ամրացել են, անհամեմատ ավելի շատ հաց պիտի տան:

Այժմ վոչ վոք չի վախենում, վոր կուլակը կարող ե ըսպառնալ քաղցով, թե մեզ կթողնե առանց հացի: Ամրապնդված կոլլագներն ու սովորողները թե հացի և թե մյուս գյուղատնտեսական մթերքների մեր բոլոր կարիքները կարող կինեն բավարարել լիովին:

Չմոռանանք հիշել և բացատրել ներկա մատակարարման գժվարություններն ու նեղությունները մանուֆակտորայի, մսի, շաքարի և այլ մթերքների վերաբերմար:

Ճիշտ ե, այս տարի մենք ավելի քիչ ապրանքներ ունենք, քան ունեինք վերջին յերկու տարիներում: Պատճառն այն է, վոր վերջին յերկու տարիների ընթացքում տեղի ունեցավ տեխնիկական կուլատուրաների անբերրիություն, վորն առաջ յեկավ մեր գյուղատնտեսական հին ձեւերի անկարող դըրությունից և կուլակների վնասակար սարստաժի պատճառով: Շատ պարզ ե, վոր ճակնդեղի պակասությունն առաջ բերեց շաքարի նեղություն, բամբակի պակասությունը — մանուֆակտորայի գժվարություն և այլն:

Բացի դրանից, մենք ունեցանք հասարակական փոխարարերությունների և իրերի մեծ փոփոխություն — բեկում, վորն առաջ բերեց դասակարգային սուր կոփ և մի շաբք վընասարարություններ: Արիշ կերպ ել չեր կարող լինել, թշնամին զգում ե սոցիալիստական համատարած արշավը, վորը

մահ ե սպառնում նրա գոյության: Սոցիալիստական համատարած արշավով, հսկամյակի յերկու տարվա տված հաղթական բանվաճումներով պրոլետարիատը ստեղծեց այն նյութական բազան մեր յերկրում, վորը շարունակում է ծավալվել և ամրացան մեր յերկրում, վորը շարունակում է ծավալվել և ամրացան մատակարարման գործը: Ծանոթանալով առանձին մթերքների մատակարարման գործին, մենք կտեսնենք, վորարդեն լուրջ հաջողություններ ունենք այդ ինդրում: Կոլեկտիվացման հաջողությունների շնորհիվ, սովորողների ընդարձակման և լավ բերքի հետևանքով այսոր յերկիրն ապահովված է հացով:

Նաքարի ձակնդեղի ցանքսերն այս տարի անցյալ տարվանից յերկու անգամ ավելի յեն և շաքարի գործարանները լիովին ապահովված են հումույթով:

Մի քանի ամսից մենք կունենանք առատ շաքար:

Հյուսիսային կովկասի բանվորական կոոպերացիան միայն ներկա տարում ունի հինգ հազար հեկտար սեփական բանջարանցային ցանքսեր: Իր կաթնատնտեսությունը ընդարձակել է 6000 կովերով: Խոզաբուծությունը լայնացրել է 16 հազար խողերով: Թունաբուծությունը — 110 հազար թունաբուծով: Հյուսիսային կովկասի աշխատավորության մատակարարելու համար ապրանքներ են բերված:

1926-27 թ. 187 միլիոն ռուբլու

27-28 » 215 » »

28-29 » 251 » »

29-30 » 273 » »

Արդյունաբերության գյուղատնտեսական հումույթի մատակարարումն ապահովելու համար հաստատ մթերքոցներ են ձեռնարկված, վոր 1932-33 թվին մեր արդյունաբերությունը ըստանա 100 հազար փութ յեկիպտացորեն: 1932 թվին մենք կունենանք 40 միլիոն փութ սոյա: Այս տարի մենք ունենք 90000 հեկտար բամբակ, իսկ 1932 թվին մենք կունենանք 600,000 հեկտար բամբակ: Սա կտա մեզ մոտավորապես 18 միլիոն փութ բամբակ, այնքան, վորքան վոր մենք այժմ բերանիոն փութ բամբակ, այնքան, վորքան վոր մենք այժմ բե-

բում ենք արտասահմանից, մեր պակասը լրացնելու համար, մեր ֆաբրիկաների համար:

Մոի ծանր խնդիրը լուծելու համար, բացի մյուս միջներից, ձեռնարկված են հաստատ միջոցներ, վոր 1932 թվան մենք կարողանանք հասցնել խողերի քանակությունը 10 միլիոնի:

Վնասարարական բանդայի վոչչացումը մոի արշունաբերության մեջ մեծ հաղթանակ է մեզ համար:

Այլ սննդամթերքների մատակարարման գործում ել մենք ունենք վորոշ հաջողություններ: Չնայած վնասարարության և արարատի բյուրոկրատիզմին, զգալի չափով ավելացած է ձեւական վորսը:

Բայց միանդամայն պարզ պիտի լինի բոլորի համար, վոր մեր հաջողությունները և հսկայական հնարավորությունները սննդամատակարարման գործում կարելի յե իրականացնել այն ժամանակ, յերբ աշխատավորական լայն մասսաներն աշալուրչ կերպով ոգնության կամ բանվորա-գյուղացիական վերահսկիչ մարմիններին, մեր թշնամիների—կուլակների վնասարարությունները կանխելու, ոգնության գալու սպառողական ընկերություններին և ոժանդակելու նրանց ձեռնարկած լայն մատակարարման գործի հաջող ավարտման:

Բացի դրանից, կազմակերպվելով կոլտնտեսությունների մեջ, չքափորներն ու միջակները հնարավորություն կունենան արագ դուրս յեխելու կարիքից և վերջ տալու տգիտությանն ու խավարին: Իսկ այս բոլորը միասին առաջ՝ նշանակում են վերջ կուլակային շահագործության:

Կուլակները միայն այն ժամանակ են ուժեղ, յերբ չքափորներն ու միջակները գանվում են տգիտության, խավարի մեջ և ապրում են ցրիվ ու անողնական:

Կոլխոզները մահ են բերում կուլակին և դրա համար ել կուլակները կոլխոզներին դեմ են և դիմելով ամեն միջոցի՝ սպառության, հրդեհի, պրովակացիայի և այն, ամեն կերպ աշխատում են խանդարել կոլխոզների կազմակերպության:

Ինչպես ասում են ընկեր Ստալինը՝ «կուլակը Խորհրդային

իշխանության թշնամին ե, նրա հետ մենք չենք ունեցել և չենք կարող ունենալ հաշտություն»: Չնայած բոլոր խոչնդուներին, կոլխոզային շարժումն ընդարձակվում է և բոլոր չքափորներն ու միջակները, վորոնք դեռ կոլխոզի մեջ չեն մտեմ լավ պիտի իմանան և հասկանան ընկ. Ստալինի վերոհիշյալ խոսքերն իրենց հետագա անելիքի ժամանակ:

## ԿՈՒԼԱԿԻՆ ՀԱՐՎԱԾԵԿՑԻ ՀԱՐԿԱԾՎԱԼԻԹՅԱՆՔ

Խորհրդային իշխանությունը միշտ և ամեն կերպ աշխատել և սահմանափակել կուլակների տնտեսության աճը: Այդ պատճառով ել կուլակների վրա միշտ դրվում են մեծ հարկեր: Կուլակները հարկվում են առանձնապես, անհատական կարգով: Սա նշանակում է, վոր ամեն մի կուլակի բոլոր յեկամուտը հաշվում և առանձնապես:

Գյուղագործությը սահմանում է ամեն մի կուլակի համար նրա յեկամտի չափը, հաշվի առնելով նրա տնտեսության առանձնահատկությունները: Այս հաշվով ել կուլակը վճարում է իր հարկը իր բոլոր յեկամտից, առանց մի վորեւ արտոնության:

Այդպես եր առաջ և անցյալ տարի:

Բայց այժմ կուլակի հարկումը փոփոխվում է և այդ փոփոխությունը կատարվում է հետեւյալ կարգով—

Առաջին՝ անցյալ տարի անհատական կարգով հարկվում ելին միայն ուժեղ կուլակները և հարկային մասնաժողովներին շատ դժվար եր վորոշել վորն են նրանց մեջ ավելի հարուստը. այդ պատճառով ել շատ կուլակների հաջողվում եր խուսափել հարկումից: Ահա թե ինչու նոր որենքով անհատապես հարկվում են բոլոր կուլակներն անխափիր:

Յերկրորդ՝ անցյալ տարի կուլակի յեկամտի մեկ ոսւբլուց վերցնում ելին այնքան հարկ, վորքան միջակից. ուրիշ խոսքով՝ հարկի հատկանիշը միատեսակ եր նրանց համար: Այս տարի կուլակների համար սահմանված է առանձին չափ, վոր

անհամեմատ բարձր ե միջակների չափից: Բայցի դրանից, կուլակները վոչ մի զիջում չեն ստանում, չեն ստանում նույնպես ընտանիքների բազմանդամ լինելու գեղքում այն արտոնությունները, վոր տրվում են միջակներին:

Յերրորդ՝ գյուղատնտեսական նոր որենքը պարզ և վորոշ հայտարարում ե, վոր կուլակային տնտեսությունները վոչ մի արտոնություն չունեն և վոչ մի արտոնությունից չեն կարող ոգտվել: Այդպիսով այն փոփոխությունները, վորոնք այս տարի մացված են նոր որենքի մեջ, ծանրացնում են կուլակների հարկը:

Ամեն մի չքավոր և միջակ պետք ե լավ իմանա, վոր անհատական հարկը սահմանված ե միմիայն կուլակների համար: Այդ մասին ճշշտ և վորոշ կերպով ասված ե նոր որենքի մեջ: Սակայն անցյալ տարի յեղել են գեղքեր, յերբ անհատական կարգով հարկվել են և միջակները: Իհարկե այդ միանգամայն սխալ է յեղել:

Գյուղաբների պետք ե խիստ հետևեն, վորպեսզի վոչ մի միջակ տնտեսություն անհատապես չհարկվի, իսկ ամեն մի միջակ պետք ե իմանա, վոր որենքն ամենախիստ կերպով արգելում ե միջակին անհատապես հարկել, վորովհետև այդ ձեփ հարկումը միմիայն կուլակների համար ե, իսկ միջակին որենքը տալիս ե արտոնություններ և թեթևություն:

## ՈՎՔԵՐ ԵՆ ԱԶԱՏՎՈՒՄ ՀԱՐԿԻՑ

Չքավոր անհատական տնտեսությունները միանգամայն ազատվում են հարկից: Նոր որենքը, ինչպես և հինը, այդպիսվ ոգնում ե չքավորներին՝ ամրացնելու իրենց տնտեսությունը:

Վորպեսզի հեշտ լինի հարկադիր հանձնաժողովին վորոշելու, որենքում պարզ և վորոշ ասված ե, վոր հարկ չեն վճարում այն տնտեսությունները, վորոնք ունեն մինչեւ 110 ռուբ. յեկամուտ և բաղկացած են մեկ կամ յերկու շնչից, կամ մինչեւ 130 ռուբ. յեկամուտ և բաղկացած են 3 կամ 4 շնչից, 160 ռ. յեկամուտ և բաղկացած են 5 շնչից և ավելի:

Բոլոր այդպիսի ընտանիքները համարվում են չքավոր և պիտի միանգամայն ազատվեն հարկից, առանց մի վորեւ զիմումի: Մի շարք ընտանիքներ, վորոնց յեկամուտը չնայած պիտի յե, քան չքավորների ընտանիքներինը, սակայն համարվում են սակավազոր և նույնպես ազատվում են հարկից:

Բայց ազատվում են նրանք համաձայն իրենց դիմումի և գյուղաբների առանձին ցուցակի և հայեցողության: Այսպիսով գյուղատնտեսական հարկից ազատվում են վոչ միայն բոլոր չքավոր գյուղացիներն, այլ և սակավազոր միջակները:

## ԻՆՉՈՐԻ ՅԵ ԽՈՐՀՐԴԻ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԳՆՈՒՄ ՅԵՎ ԱԲՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼԻՍ ԿՈԼԽԽՈՋՆԵՐԻՆ

Մի շարք ույցներում մեծ ու փոքր տնտեսությունների ստուգումը ցույց է տվել մի շատ հետաքրքիր պատկեր: Փոքր տնտեսության մեջ մի հեկտար հողամասը մշակելու համար գործադրված ե 66 որ: Այդ մի հեկտար հողամասի մի բանվորի որվա յեկամուտը յեղել ե 40 կոպեկ: Միջակ տնտեսությունը մի հեկտար հողամաս մշակելու համար գործադրել ե 50 որ, իսկ մի բանվորի որվա յեկամուտը յեղել ե 75 կոպ., իսկ խոշոր անտեսությունը մի հեկտար հողամասի մշակության համար ծախսել ե 34 որ, յեկամուտ ե ստացել որեկան 1 ռ. 25 կոպ.: Հետեւապես, վորքան խոշոր է տնտեսությունն, այնքան ել հեշտ և նրան մշակել և այնքան ել մեծ ե նրա յեկամուտը: Ինքն ըստ ինքյան պարզ ե, վոր ամեն մի վորքիկ տնտեսություն վոչ մի հարավորություն չունի ձեռք բերելու այն բուրք, վորը բարձրացնում ե նրա տնտեսությունը՝ տրակտոր, գյուղատնտեսական մեքենաներ, քիմիական պարարտացում և այլն և բացի դրանից, առանձին, վորքիկ հողամասերը հնարավոր չե արակտորով վարել, մշակել վորովհետև մեջն ընկած սահմանները խանգարում են, իսկ մշակել հին պատճենական ձևով ծանր ե, յերկար ժամանակ և պահանջվում, ձեռնտու չե և շատ քիչ յեկամուտ ե ստացվում: Այժմ միլիոնավոր չքավոր և միջակ գյուղացիական տնտեսություններ գլուխցում են, թե վորքան ոգտավետ և ձեռնտու յեն մեծ, խոշոր, կոլեկտիվ տըն-

տեսությունները, քան անհատական, առանձին, մանր տնտեսությունները, վորոնք անդոր են մի բան անելու:

Այս գիտակցությամբ ե, վոր նրանք միանում են, կազմում ընկերություններ, արտելներ, կոմունաներ, կոլտնտեսություններ:

Միմիայն կոլտնտեսություններն և սովորողներն են, վոր կարող են բարձրացնել գյուղատնտեսությունը, ավելացնել կենսական մթերքների քանակը և իջեցնել նրանց արժեքը:

Միմիայն կոլտնտեսությունների մեջ ե, վոր բատրակը, չքավորը և միջակը հնարավորություն պիտի ունենան դուրս յեխելու տգիտության խավարից, կարիքեց և կուլակի շահագործությունից:

Այդ պատճառով ե ահա, վոր Խորհրդային իշխանությունն ամեն կերպ աջակցում ե, ոգում չքավորներին, բատրակներին և միջակներին, վորոնք իրենց կամքով ցանկանում են մտնել կոլտնտեսությունների մեջ և կամ թե կազմել կոլտնտեսություններ:

Գյուղատնտեսական հարկն ել այնպես և կազմված, վոր չդժվարացնե, այլ ընդհակառակը, թեթևացնե և հեշտացնե կոլտնտեսությունների գրությունը:

## Ի՞նչ է ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԱՐԿՈՒՄԸ

Մինչև այս վերջին տարին կոլտնտեսություններից գյուղատնտեսական հարկը ստացվում եր հետեւյալ ձևով. որինակ, յեթե ամեն մի անդամի վրա ընկում ե տարեկան 35 ռուբ. յեկամուտ, այդ գեղքում ամեն մի ռուբլուց ստացվում եր 5 կ., յեթե տարեկան յեկամուտը համառ մի 45 ռ., այդ գեղքում ստացվում եր կրկնակի, այն ե՝ 10 կոպ., իսկ յեթե յեկամուտը 55 ռուբլի յեր և ավելի, այն ժամանակ ամեն մի ռուբլուց ստացվում եր 15 կոպ.. Այսպիսով մինչև որս յեկամափակելաւու գեղքում համեմատարար և ավելանում եր հարկը. Ուրիշ խորով, հարկը պրոգրեսիվ կերպով ավելանում եր: Գյուղատնտեսական նոր որենքով կոլտնտեսությունների պրոգրեսիվ

հարկումը փոխվում ե և ամեն մի անդամի յեկամուտը լինի 35, 45, 55 կամ ավելի, միևնույն ե, հարկի չափը չի փոխվում, չի ավելանում:

Կոլտնտեսությունների բոլոր յեկամուտները հարկում են մի չափով, հարկումը դառնում ե այժմ համեմատական:

## Ի՞նչՊԵՍ Ե՞Վ ՀԱՐԿՎՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՅԻՆԵՐԸ, ԱՐՏԵԼՆԵՐԸ ՑԵՎ ԿՈՄՈՒՆԵՐԸ

Ընկերությունների և արտելների հարկումը համեմատական կերպով ե կատարվում: Արտելի յեկամուտը թեկուզ 6 հազար լինի, թեկուզ 8 հազար, միևնույն ե, հարկը նրանից ստանում են մի չափով, այն ե՝ 5 կոպ. ամեն մի ռուբլուց: Պարզ ե, վոր համեմատական հարկը մեծ թեթևություն ե կոլտնտեսությունների համար:

Վորքան նրանք բարձրացնեն իրենց յեկամուտը, հարկի չափը դրանից չի ավելանում: Իսկ կոմունաները հարկվում են ևս առավել ցածր չափով, քան թե արտելներն ու ընկերությունները: Կոմունայի յեկամափակելու միան մի ռուբլուց վերցվում ե միայն 4 կոպ. հարկ:

Բացի դրանից, ույոնական հարկագիր համաձայնողները կարող են սակավագոր կոմունաների վերաբերմամբ հարկը իշեցնել մինչև 50 տոկ., այն ե՝ կեսը զիջել: Որինակ, յենթագրենք, վոր կոմունայից պետք ե ստացվի 200 ռուբլու հարկ սական կոմունայում կան շատ չքավորներ, սակավագոր միշակներ և բատրակներ: Վորպեսզի ոգնել այդպիսի կոմունային արագ ամրանալու, վոտքի կանգնելու և բարձրացնելու իր արդյունաբերությունը, ույզործկումը կարող ե նրանից վերցնել վոչ թե 200 ռուբլի, այլ յերկու անգամ պակաս, այն ե՝ 100 ռուբլի: Կան և այնպիսի սակավագոր, թույլ կոմունաներ, արտելներ և ընկերություններ, վորոնց կարելի յե և պետք ե միշակամայն ազատել հարկից, վորպեսզի նրանք ամրանան և

Հնարավորություն ունենան կազմակերպվելով դարձնել իրենց տնտեսությունը:

## ՎՈՐ ԿՈԼԽՈԶՆԵՐՆ ԵՎ ԱԶԱՏՎՈՒՄ ՀԱՐԿԻՑ

Ամեն մի կոլխոզ ազատվում է հարկից, յեթե նրա յեկամտից ամեն մի չնչին ընկնում է 30 ռուբլի կամ ավելի քիչ:

Որինակի համար վերջնենք մի կոլխոզ, վորը կազմված է 200 չնչին և վորը ստանում է տարեկան 5 հազար ռուբլի յեկամուտ:

Վորպեսզի վորոշենք, թե այդպիսի կոլխոզը պիտի վճարի հարկ թե վոչ, պետք է կատարել մի այսպիսի հաշվետեսություն, այն ե՛ պետք է նրա յեկամուտի գումարը բաժանել նրա անդամների շնչի վրա, այն ե՛ 5 հազար ռուբլին բաժանել 200-ի. դուրս կտա, վոր կոլխոզի անդամները ստանում են մարդագույս տարեկան 25 ռուբլի յեկամուտ, իսկ գյուղատնտեսական հարկի որենքն ասում ե, վոր յեթե ամեն մի մարդու յեկամուտը պակաս է 30 ռուբլուց, այդպիսի կոլխոզն ազատվում է հարկից, ուրեմն այդ կոլխոզը չպետք է վճարի հարկը յեթե այդ կոլխոզի մեջ լինելին քիչ անդամներ, որինակ, 100 հոգի, այն ժամանակ հաշվի առնելով 5 հազար ռուբլի յեկամուտը, մարդագույս կընկնի վոչ թե 25 ռուբլի, այլ տարեկան 50 ռուբլի յեկամուտ: Իսկ յեթե կոլխոզի անդամների տարեկան յեկամուտը 30 ռուբլուց ավելի յէ, այդպիսի կոլխոզը հարկից չի ազատվում:

Պետք է իմանալ նաև, վոր հարկը վոչ թե 30 ռուբլուց ավելացածից ե վերցվում, այլ ամբողջ յեկամտից, այն ե՛ ամբողջ 50 ռուբլուց:

Մյուս կոլխոզները հարկ վճարում են իրենց հաշվարարության համաձայն: Նրանք ազատվում են հարկից, յեթե յուրաքանչյուր շնչին յեկամուտ է ընկնում 60 ռուբլի, կամ ավելի պակաս:

Որինակ, հաշվարկությունից յերեսում ե, վոր կոլխոզի յե-

կամուտը հավասար է 12,000 ռուբլու: Կոլխոզում կա 300 անդամ, շուրջ մի շնչին ընկնում է 40 ռուբլի, այսինքն 60 ռուբլուց պակաս: Կոլխոզը հարկ չի վճարում: Դրանից պարզ է, վոր կոլխոզի համար ձեռնտու յէ ունենալ կանոնադրություն, վորպեսզի հարկը դնեն վոչ թե յեկամտային նորմայի համաձայն, այլ ըստ հաշվետվության:

## ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԲ—ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՓԱՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությունը տարե-ցարքարի աճում է: Գործարանների, ֆաբրիկաների, ելեկտրոն - կայանների թիվը շատանում է, յերկաթուղուցանցն ընդարձակվում է, ապրանքների արտադրությունն ավելանում է: Գյուղատնտեսությունը նույնպես բավական աճել է, սակայն յերբ մենք համեմատենք մեր արդյունաբերության զարգացումը գյուղատնտեսության հետ, կտեսնենք, վոր գյուղատնտեսությունը բավականին յետ է մնում արդյունաբերությունից: Սրա պատճառն այն ե, վոր ցանքսերի տարածությունն անբավարար չափով ե ընդարձակվում և բերքի հասույթը բարձրանում:

Մեր յերկրի բնակչության, բանվորների և գյուղացիների պահանջը հացի համար ավելի արագ է աճում: Այդ պատճառով ե, վոր չնայած մեր ցանքսերի տարածությունը տարե-ցարքի ավելանում է, համենայն դեպս հացի պակասությունը չի վերաբռնում: Նույնը կարելի յէ ասել և անասնաբուծության համար:

Բացի գրանից, պետք է նկատել, վոր անասնաբուծությունը գտնվում է ավելի անբավարար գրության մեջ, քան թե յերկարգությունը:

Անասնաբուծության գրությունն առանձնապես վատթարացավ վերջին տարվա ընթացքում, յերբ կուլակները չարամտությամբ մորթում ելին իրենց անասունները և դրդում նույն բանն անելու և անգիտակից գյուղացիներին:

Կովերի և մանր անասունների թիվն այդ պատճառով պա-

կամում եւ անցյալ տարվա համեմատ։ Ահա այդ պատճառով եւ, վոր մենք մսի, կաթի, յուղի պակասություն ունենք և նեղություն ենք կրում։ Պակասում եւ նույնպես և կաշի՝ կոչկեղենի համար, բուրդ, բամբակի, կթափատ և ուրիշ այլ հում նյութեր՝ մանուփակտուրայի և ուրիշ գանազան ապրանքների համար։

Գյուղին անհրաժեշտ են այդ ապրանքները, պետք են տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, հողը պարարտեցնող միջոցներ, միջոցներ կովելու մասողների դեմ և շատ ուրիշ առարկաներ, վորոնց կարող ե տալ նրան միայն քաղաքն իր գործարաններով և ֆաբրիկաներով։ Այժմ մեզնում, մեր խորհրդային յերկրում կառուցվում են շատ ելեկտրոկայաններ, ֆաբրիկաներ և գործարաններ, բայց նրանք դեռ ևս համեմատաբար քիչ են մեր ժողովրդի կարիքները բավարարելու համար արակտորներով, դազգյաններով, գյուղատնտեսական մեքենաներով։ Պակասում ե նույնպես հումույթ այդ ապրանք ներն արտադրելու, պատրաստելու համար։ Կարող ե արդյոք ֆաբրիկան տալ գյուղացուն մանուփակտուրա, յերբ նա չի ստանում կթափատ, բամբակ։

Կարող ե բավականաչափ կոշիկ պատրաստել յեթե քիչ ե կաշին. իհարկե, վոչ։

Այդ պատճառով մենք ստիպված ենք զնել, լրացնել մեր պակասն արտասահմանում, զնելով այնտեղ վոչ միայն մեքենաներ, այլ և հումույթ։ Այդ մեզ համար շատ ծանր ե և անխորժելի, վորովհետեւ այն բոլորի համար, ինչ վոր մենք զնում ենք արտասահմանում, ստիպված ենք վճարել վոսկով և կենսական պիտույքներով։ Այդ պատճառով պետք ե ամեն կերպ աշխատել, վորպեսզի զարգանա և ընդարձակի մեր սեպհական արդյունաբերությունը, մեր սեպհական գյուղատնտեսությունը։ Յեվ վորպեսզի այդ գործն արագ գլուխ բերվի, Խորհրդային իշխանությունը կազմել ե պլան, թե ինչ և վորքան ժամանակվա ընթացքում պետք ե կատարել արդյունաբերության և գյուղատնտեսության ընագավառում։

Հաշված ե, թե պետության ինչքան վող հարկավոր կիսի, վորպեսզի ըստ կազմած պլանի, բոլորը կատարել, ինչ վոր ծրագրված ե հինգ տարիների ընթացքում կատարելու։

Ահա հենց այս ե մեր հնդամյա պլանը—ՀՆԳԱՄՅԱԿԻ։

Այս հնդամյա պլանի համաձայն, պետությունը հսկայական գումարներ ե ծախսում գյուղատնտեսությունը բարձրացնելու համար։ Սակայն միայն հնդամյակը չի այնպես կազմված, վորպեսզի գյուղատնտեսությունը բարձրացնե։ գյուղատնտեսական հարկի նոր որենքն ևս այնպես ե կազմված, վորպեսզի ոգնե կոլխոզներին, չքավորներին և միջակներին բարձրվելու իրենց անտեսությունը։ Այդ նպատակով սահմանված են վորոշ արտանություններ կոլխոզների և անհատական արտեսությունների համար։

Այդ արտանություններից ոգտվում են նրանք, վորոնք իրականացնում են ազգոմինիմումը, ընդարձակում են իրենց ցանքսերը, բարձրացնում են բերքը, ավելացնում անասունների քանակը, լավացնում տեսակները, ցանում են տեխնիկական բույսեր—վուշ, ճակնդեղ, կանեփ և այլն։

Գյուղատնտեսական հարկի նոր որենքն ամեն կերպ նպատակում ե գյուղատնտեսության զարգացման, ընդարձակման և բարգավաճման։

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԶՄԱՆԴԱՄ

### ՀԱՏԱԿԻՔՆԵՐԻՆ

Գյուղացիական բազմանդամ ընտանիքներին տրվում ե զիշում։ Յեթե ընտանիքը բաղկացած ե 7-8 հոգուց, այդպիսի ընտանիքը ստանում ե 5 տոկոս զիջում, այն ե՝ նրա հարկից պակասեցվում ե մի քսաներորդ մասը—ամեն մի 100 ոռություց հանվում ե 5 ոռություն։ Յեթե ընտանիքը բաղկացած ե 9-10 հոգուց, ստանում ե կրկնակի զիջում, այն ե՝ 10 տոկոս—100 ոռություց—10 ոռություն։

Իսկ 11 հոգի և ավելի ընտանիքները ստանում են ևս պետք և զեղչ, այն ե՝ հարկի մի վեցերորդ մասը—ամեն մի 100 ոռություց 15 ոռություն կամ 15 տոկոս։

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՌԻՅԼ ԿՈԼԽՈԶ-  
ՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՅՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ,  
ՎՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ՄԵԶ ԵՆ ԱՌՆՈՒՄ  
ԹՈՌԻՅԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Գյուղատնտեսական հարկի նոր որենքը տալիս է նաև մի պուանձին արառնություն կոլխոզներին:

Բացատրենք հետեւալ որինակով.—յենթադրենք մի կոլխոզ ունի տարեկան 10 հազար ոռութի յեկամուտ, վորից յերեք հազարը պատկանում է 30 թույլ տնտեսությունների, վորոնք անցյալ տարի վորպես անհատական չքավոր տնտեսություններ, հարկ չեն վճարել: Այդ 3 հազար ոռութի յեկամուտն ամբողջովին չի հարկվում, այլ հարկվում է նրա քառորդ մասն, այն եւ 750 ոռութի: Կոլխոզը ստանում է զիջում 2250 ոռութի այն պատճառով, վոր նա իր արտելի մեջ ընդունել է 30 թույլ տնտեսություններ չքավոր գյուղացիներից:

Պարզ է, վոր դա կոլխոզի համար մեծ թեթևություն է: Յեթե այդ արտօնությունները շինեյին չքավորների համար, վորոնք մտել են կոլխոզի մեջ, պարզ է, վոր կոլխոզը պետք է վճարեր հարկ իր ամբողջ տարեկան յեկամտից—10 հազար ոռություց:

Ենորհիվ այդ որենքի, կոլխոզը վճարում է իր հարկը փոխանակ 10 հազարի, 7500 ոռութի յեկամտից: 2500 ոռութին ըստ որենքի զիջում է:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԱՆՔՍԵՐԻ ՏԱՐ-  
ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Կոլխոզներն, արտեխներն ապա և անհատական տնտեսությունները պետք են չմոռանան նոր որենքի տված արտօնությունները ցանքսերի տարածությունն ընդարձակելու համար: Յենթադրենք մի վորեւ տնտեսության դրույքային թերթում 1928-29 թվին նշանակված է 7 հեկտար ցանքս, իսկ այս 1930 թվին այդ նույն տնտեսությունը վարել է 9 հեկտար, այն եւ 2 հեկտար ավելի: Այդ 2 հեկտար ավելի ցանքսից հարկ չի

մերցվում, հարկը վերցվում է միմիայն անցյալ տարվա պես 7 հեկտարի համար: Գյուղատնտեսական հարկի նոր որենքի համաձայն, ամեն մի ավել ցանած հող, համեմատած 1928-29 թ. հետ, հարկից միանգամայն ազատվում է:

Անհատական տնտեսության մեջ այդպիսի հավելումը շատ հեշտ է վորոշել:

Կոլխոզի մեջ այդ հավելումը նույնպես դժվար չէ: Ամենից առաջ պետք է հաշվել թե ինչքան են ցանել կոլխոզի անդամները 1928-29 թ., յերբ նրանք անհատական տնտեսություններ են:

Յենթադրենք թե նրանք բոլորը միասին ունեյին 305 հեկտար, իսկ յերբ նրանք միանում են կոլխոզի մեջ, վարում և ցանում են վոչ թե 305 հեկտար, այլ որինակի համար, 520 հեկտար: Ուրեմն նրանք ցանում են 215 հեկտար ավելի, քան 1928-29 թ.: Ահա այդ 215 հեկտարը համարվում է նոր տարվա աճը և հարկից միանգամայն ազատվում է:

Կոլխոզի բոլոր անդամները, անհատական տնտեսությունները պիտի իմանան, վոր ինչքան ել ամեն մի տնտեսություն յանքսը մեծացնե, լայնացնե, ավելացնե համեմատած 1928-29 թ. հետ, միենալուն ե, նրա հարկը չի ավելանալու և նրա ավելացրած ցանքսից հարկ չեն վերցնելու: Այդպես ե գյուղատնտեսական հարկի նոր որենքը:

**ԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ  
ԿՐՃԱՏԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՑԱՆՔՍԵՐԻ  
ՏԱՄԱԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՐԿՎՈՒՄ ԵՆ  
ԱՆՑՅԱԼ ՏԱՐՎԱ ՀԱՓՈՎ.**

Կարող են պատահել այնպիսի դեպքեր, վոր մի տնտեսությունը փոխանակ իր ցանքսը ավելացնելու, պակասեցնելու եւ: Այս հանգամանքի դեմ իհարկե պետք է կովեէ Այդ պատճառով այն տնտեսությունները, վորոնք չարամատությամբ վարում են ցանում են անցյալ տարվա չափից պակաս, հարկ են վճարում իրենց անցյալ տարվա ցանքսերի չափի հաշվով:

Որինակ, վորևե տնտեսություն անցյալ տարի ուներ 12  
հեկտար, իսկ այս տարի ցանել է միայն 8 հեկտար հող: 4 հեկ-  
տար անցյալ տարվանից պակաս ե ցանել և յեթե այդ 4 հեկ-  
տարը պակասեցրած ե առանց մի վորևե լուրջ պատճառի, այդ-  
պիսի տնտեսությունը հարկ կվճարի և կընատված ցանքսի  
համար:

Ուրիշ բան ե, յեթե ցանքսի պակասը առաջ է յեկել սերմ-  
նացան չինելու, բանվոր ձեռքերի պակասության, ձիու անկե-  
ման և կամ ուրիշ նման հարգելի պատճառով. այդ դեպքում  
իհարկե հարկը կառնվի միայն ցանքսի այն տարածությունից,  
վորր անտեսությունն այս տարի ցանել ե:

Մեկն ու մեկի չցանած արտը կարող է ցանել մի ուրիշ չքափոր կամ միջակ, կամ կոլխոզ։ Այդ գեպօռում նույնպես այդ դաշտից հարկ չի առնվում։ Այդ ցանքուը հարկից ազատվում է միանգամայն։

ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆԵՐ ԱՆՄՉԵԿ ՀՈՂԵՐԸ  
ՅԱՆԵԼՈՒ ՀԱՄԱԲ

Ամեն մի ռայոնում կան անմշակ հողեր: Ամեն մի կոլխոզ, չքավոր յեվ միջակ գյուղացի պետք է աշխատի, ջանա վարել և ցանել այդ անմշակ հողամասերը: Անմշակ հողամասերը վարելը և ցանելը յերկու տարրով ազատվում է հարկից, սակայն այս գեղքում պետք է իմանալ, վոր անմշակ հողերը վարելիս և ցանելիս, այդ ցանքսն այն գեղքումն է ազատվում հարկից, յերբ գյուղացին միենուն ժամանակ վարում և ցանում է իր դաշտամասը: Խոկ յեթե մեկն ու մեկը վարե և ցանե 2 հեկտար անմշակ հող և միենուն ժամանակ պակասեցնե իր հողամասից, ցանքսից, որինակի, 2 հեկտար, այդ գեղքում սահմանված արտօնությունը նրան չի վերաբերի, քանի վոր վոչ մի տարբերություն, վոչ մի աճումն չունի նա:

# ԱՐՏՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑ- ՄԱՆ ՀԱՄԱՐ

Հազիվ թե այժմ մեկնու ու մեկը գտնվի զյուղում, վոր չի-

մանաւ ազբումինիմումի մասին: Ազբումինիմումն այն հասարակ  
բարվոքումներն են, առանց վորոնց դժվար ե բարձրացնել բեր-  
քը: Այդ բարվոքումների ցուցակը կազմում են ռայզործկոմնե-  
րը և հայտարարում բնակչության: Ամեն վոք զիտե և պիտի  
իմանա, վոր բերքը բարձրանում է աշնանավարից, կանուխ վա-  
րելուց, ընտիր սերմեր ցանելուց, սերմերը մաքրելուց, տեսակ-  
ների բաժանելուց, դտելուց, սերմերի ախտահանու-  
թյունից, շարքացանքսից և այլն: Այդ պատճառով Խորհրդային  
իշխանությունն արտօնություն է տալիս այն բոլոր կոլիխողնե-  
րին, զյուղերին, համայնքներին, վորոնք արտը վարելու, հեր-  
կելու և ցանելու դեպքում հին ձեռքերից անցել են նոր ձեռքի,  
նոր կատարելագործված միջոցների: Ով վոր ազբումինիմումը  
կիրառում է կյանքի մեջ, ստանում է 10 տոկոս զիջում, այն  
ե՝ տրվելիք հարիս տասերորդ մասը չի վճարում:

Որինակ, 30 սուբյու փոխարեն վճարում է 27 սուբյի:

Զիջում արվում ե վոչ միայն այն բարելավության համար, վոր ստացվում ե և կախված ե հատուկ գյուղատնտեսական մեքենաներից և վոր պահանջում ե մեծ գումարների ծախքը: Վորպեսզի ստանալ զիջում հարկը պակասեցնելու համար, բավական ե կիրառել ամենատարրական կուլտուրական բարելավությունը, վորը հնարավոր ե ամենաթույլ գյուղացու համար, որինակ, ժամանակին հերկել կանուխ վարել անել ժամանակին աշնանավար, ջոկել զտել սերմերը, ախտահանել և այն ահա ինչ ե պահանջում ագրոմինիմումը:

Սակայն պետք է լավ իմանալ, վոր այդ բարելավություններն ոգտավիետ են միայն այն ժամանակ, յերբ այդ բոլորը կատարվում են մի համայնքի բոլոր գյուղացիների կողմից։ Վորովհետեւ յեթե մի գյուղում գյուղացին իր դաշտամասում ցանե առողջ և ընտարի սերմեր, իսկ հարևան անտեսությունը չզտած, չախտահանած, հիվանդ սերմեր, վորը կարող է վարակել հարևանի առողջ դաշտը, իհարկե, այդ տեսակ աշխատանքից և վոչ մի ողուտ չի լինի։

Ահա ինչու համար որենքով սահմանված և պղումինիմումի համար արտօնություն տալ այն գեպքում, յեթե բարելաւ

վությունը ձեռնարկած և էիրառված ե կոլխոզով կամ գյուղով  
ամբողջովին:

Այդ դեպքում զիջում ստանում ե ամեն մի տնտեսու-  
թյուն, այսինքն այդ գյուղի ամեն մի տնտեսություն, իհարկե,  
բացի կուլակներից, ստանում ե զիջում իր հարկից 10 տոկոսով:

### ԳՅՈՒՂԱՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԿՈՂՄԱԿԻՑ ԲԱԶՄԱԴԱՇԱՅԻՆ ՖԱՆՔ- ՍԱՓՈԽՈՒԹ-ՅԱՆ

Յեռագաշտային ցանքսի ժամանակ հողը շատ և հողնում,  
ուժասպառ լինում և ծածկվում ե անպետք խստերով:

Բոլորովին ուրիշ բան ե բազմադաշտային սիստեմը, յերբ  
վարելանողի լիակատար ողտագործելը մեծ ողուաներ ե տա-  
լիս տնտեսության, բավավանին բարձրացնում բերքը, վորով-  
հետև վոչնչացնում ե անպետք հողերը: Բացի բերքը բարձրաց-  
նելուց, բազմադաշտային սիստեմն ավելացնում ե անտառն-  
երի կերը, մի խոսքով՝ բազմադաշտային սիստեմը շատ ոգ-  
տավետ ե գյուղացու համար:

Վորպեսզի շահագուգուել գյուղացիության՝ արագ անցնելու  
բազմադաշտային սիստեմին, գյուղատնտ. հարկի նոր որենքն  
այդ գեղքումն ել ողնության գալով, տալիս ե արտօնություն-  
ներ այն տնտեսություններին, վորոնք արդեն անցել են բազ-  
մադաշտայն սիստեմին: Այս արտօնությունները նրանումն են  
կայանում, վոր կոլխոզը կամ գյուղը, վորոնք այս տարի կանց-  
նեն բազմադաշտայն ձեին, կստանան զիջումները, այն ե՝ մի  
հեկտար ցանքսի յեկամուտը կպակասի 15 տոկոսով: Յենթադ-  
րենք գյուղն այս տարի ընդունել ե բազմադաշտային ցանք-  
սափոխություն, հետեւապես ամեն մի գյուղացու ցանքսի յե-  
կամտից, իհարկե բացի կուլակներից, կպակասեցվի 15 տոկ.:  
Յեթե մի հեկտար ցանքսի յեկամուտը վորոշված ե 40 ոռորի,  
ուրեմն 15 տոկ. զիջումը հանած, կմնա 34 ոռորի, այն ե՝ 6  
ոռորի պակաս:

Այս արտօնությունը տրվում ե այն գեղքում, յերբ հար-  
կումը հաշվում ե ցանքսից, այսինքն իսկական ցանած հողա-

մասից, իսկ այնտեղ, վորտեղ հարկումը հաշվում ե վարելա-  
նողից, այն ե՝ տնտեսության ունեցած ամբողջ հողամասից,  
ինչպես ցանած, նույնպես և հանգստի թողած, — այդ պայման-  
ներում այս արտօնությունները չեն տրվում:

### ԱՐՏՈՆՈՒԹ-ՅՈՒՆԵՐԻՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ, ԱՆԱՍՈՒՆԵՐԻ, Թ-ԹՉՈՒՆԵՐՈՒԹՈՒԹՅԱՆ, ԲԱՆՁԱՐԱՆՈՅ- ՆԵՐԻ ՅԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԿՈՒՏՏՈՒՐԱՆԵՐԻ Հ Ա Մ Ա Բ

Բոլորի համար այսոր պարզ ե, թե վորքան մեզ համար  
կարենը ե բարգոքել մեր անամնապահությունը:

Անամնապահության համար ամենամեծ արտօնությունը  
ստանում են կոլխոզները: Կոլխոզներում ամբողջ յերկու տարի  
շաբաթում 1930-31 յեկ 1931-32 թ. թ. — բոլոր անտառներեն  
ազատվում են հարկումից: Կոլխոզների անդամներին պատկա-  
նող ու չհամայնացրած մթերատու անասունները՝ վոչխարնե-  
րը, կովերը և խոզերը նույն տարիներում ազատվում են հար-  
րը: Այդ արտօնությունները տրվում են գյուղատնտեսական  
արտեներին, կոմունաներին և այն ընկերություններին, վո-  
րոնք միացյալ ուժերով մշակում են հողը և համայնացրել են  
լծկանը և ինվենտարը:

Իսկ յեթե ընկերությունները համայնացրել են միայն հո-  
ղը, այդ գեղքում կովերից, մանր անասուններից ու թռչուն-  
ներից ստացված յեկամուտը յենթարկվում ե հարկման, սա-  
կայն յեկամտային նորմայից 2 անգամ պակաս չափով: Յեթե  
անհատական տնտեսության անդամները, վորոնք ունեն կովեր,  
վոչխարներ և խոզեր, մտած չեն կոլխոզի մեջ, որենքն այդ  
վոչխարներ և խոզեր, մտած չեն կովերից ունենքն ոգնում ե  
արտօնությունները նրանց չի տալիս: Նոր որենքն ոգնում ե  
թունաբուծության: Վորոշ վայրերում ուայնական գործ-  
կոմները կարող են նշանակել հարկ արդյունաբերական թռչնա-  
բուծության համար, այսինքն վաճառքի հանելու մեծ քանա-  
կությամբ հավեր, սագեր և այլ թռչուններ բազմացնելու  
համար:

Մոտակա յերկու տարիների ընթացքում, այն ե' 1930-31 և 1931-32 թվականներին և կոլխոզները և նրանց անդամների անհատական տնտեսությունները այդ տեսակ արդյունաբերական թռչնաբուծության համար վոչ մի հարկ չեն վճարում, իսկ գյուղացիների անհատական տնտեսությունները, փորոնք կոլխոզ չեն մտած, այդ տեղերում արդյունաբերական թռչնաբուծության համար հարկի կյենթարկվեն:

Առանձին արտօնություններ են տրվում և բանջարանոցների համար: Բանջարանոցային գործը մեզանում թույլ ե գարգացած: Բանջարեղենի մեծ պակասություն ե զգացվում: Մինչդեռ բանջարեղենը մննդառության անհրաժեշտ մթերք ե կազմում: Առողջապահության համար նրանք ավելի ոգտավետ են, քան թե հացը, միըլ և մինչև իսկ կաթնեղենը: Այդ պատճառով բոլոր նրանք, փորոնք պարապում են բանջարաբուծությամբ և գարգացնում նրան, նույնպես արտօնություններ են ստանում նոր որենքով:

Կոլխոզներում նոր բանջարանոցները յերկու տարով աշխատվում են հարկից: Հին բանջարանոցները յերկու անդամ պակաս են հարկվում, քան անհատական տնտեսություններում:

Անհատական տնտեսություններում նոր բանջարանոցները հարկվում են հացի ցանքսի հետ հավասար: Յեվ սա համարվում ե մեծ արտօնություն, քանի վոր բանջարանոցի յեկամուտը հինգ անգամ ավելի յէ, քան հացի ցանքսը: Կան զանազան կոլխոզներ, — հացահատիկային, անասնաբուծական, բանջարանոցային և այլն: Բանջարանոցային և այլ կոլխոզներում համայնացրած բանջարանոցների տարածությունները հարկի յենթարկվում յեկամտային նորմայից յերկու անգամ պակաս չափով, քան այն բանջարանոցները, փորոնք փորոշված են տվյալ տեղի բանջարանոցների համար:

Որինակ, յեթե բանջարանոցի յեկամտային նորման մի հեկտարից հաշվում են 150 ոռոբի, այդ յեկամտից ել պետք ե հաշվել հարկը անհատական տնտեսությունների վերաբերմամբ: Իսկ այն բանջարանոցների յեկամուտը, փորոնք համայնացրած կլինեն բանջարանոցային կամ այլ կոլխոզների մեջ,

նոր որենքի համաձայն պետք ե հաշվել վոչ թե 150 ոռոբի մի հեկտարից, այլ միայն 75 ոռոբի: Յեվ հարկն ել պիտի առնվի 75 ոռոբու յեկամտի գումարից:

Դրա համար ել բանջարանոցային և այլ կոլխոզները, համայնացրած բանջարանոցները կունենան հարկի մեծ գեղջ համեմատած անհատական տնտեսությունների հետ: Իսկ յեթե բանջարանոցային և ուրիշ բոլոր կոլխոզները նոր հողաբաժին կվեցնեն բանջարանոցի համար և կցանեն բանջարեղեններ, պեղպատմամբ այդ գեղջում այդ հողամասերը բոլորովին աղատվում են հարկից յերկու տարվա ընթացքում:

Յեկամտային նորման յեղիպատացորենի և արևածաղկի ցանքսից յերկու անգամ կրծատվում ե տվյալ վայրում յեղած նորմայի գիմաց: Բամբակային կոլխոզներում յեկամտային նորման բամբակի ցանքսի հողաբաժնի վերաբերմամբ պակասում ե յերկու անգամ՝ տվյալ ույոնում յեղած նորմայի հանգեց: Կոլխոզային պատասու այգիների, խաղողի այգիների, ծխախոտի, մախորկայի, կանեփի և կլժավատի յեկամտային նորման կրծատվում ե 30 տոկոսով՝ տվյալ տեղում յեղած նորմայի համեմատությամբ:

Այդ արտօնությունները տրվում են կոմունաներին, արտելներին և ընկերություններին, փորոնք միացյալ ուժերով մշակում են հողը և համայնացրել են լծկան անասուններին և ինվենտարը:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԵՐ ԸՆՀԱՏԱԿԱՆ ՏԲՆ-ՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ, ԸՆԸՆՈՒԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անհատական տնտեսություններին նույնպես բավական մեծ արտօնություններ են տրվում անասնապահությունը զարգացնելու համար:

Առաջին խողաբուծությունը միանդամայն աղատվում ե հարկից:

Յերերորդ՝ հարկն ամեն տեսակ անասունների ամի հա-

ժար, բացի ձիյերից, յերկու անգամ պակասում եւ Յեթե, որի հակ անցյալ տարի մի տնտեսության մեջ մի կովի յեկամուտը հաշվում եր 16 ռուբլի, իսկ այս տարի յերկու կովի յեկամուտը հաշվում ե 16+8, այն ե՝ 24 ռուբլի, այսինքն յերկորդ կովի յեկամուտը յերկու անգամ պակաս ե, ուրեմն և հարկը յերկու անգամ պակաս կվճարվի:

Յերրորդ՝ այն տեղերում, վորտեղ կան շատ յուղ պատրաստող գործարաններ, կովերի և յեզների յեկամուտյին նորման յերկու անգամ պակաս ե, քան 1928-29 թվին:

Այդ նրա համար ե, վոր այդ վայրերում յուղ պատրաստելու կազմում ե չքավոր և միջակ տնտեսությունների մեջ առանձին զբաղմունք: Պետությունն սպնում ե նրանց և պաշտպանում ե այդ զբաղմունքը:

1929-30 թվի համեմատությամբ յերկու անգամ պակաս յեկամուտ և սահմանվում կովերի, յեզների, վոչխարների բազմացման քանակի վերաբերմամբ:

Չորրորդ՝ հարկվում են միայն կոպիտ, կոշտ բուրդ ունեցող վոչխարները, մյուս բոլոր տեսակի վոչխարները աղատվում են հարկումից:

Մեծ արտօնություններ են տրվում այն ձիաբուծական ընկերություններին և անհատական տնտեսություններին, վորոնք արտադրում են զինվորական ձիյեր:

## ՈՐԵՆՔԱՎ ԲՈԼՈՐՈՎԴԻՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԻՑ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՈՒ ԿԵՐԻ ԱՐՄԱ- ՏԱՊՈՒՂՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ

Ոգտավետ և լավ կեր և համարվում անասունների համար կերպերը, վիկան, լուցերնը, քան մարդագետնի խոտը, նույնպես և արմատապուղները՝ ձակնղեղը, տակը, շաղկամը:

Յեթե անասուններին այս խոտաբույսերով և արմատապուղներով կերակրել, կարելի յետանալ ավելի շատ կաթ, միս, բուրդ և կաշի: Այս խոտաբույսերի մի հեկտարը միանգամայն փոխարինում ե յերեք հեկտար խոտաբույսին: Ուրեմն

պարզ ե, վոր յեթե հարկավոր ե կերի պաշարն ավելացնել ու նրա վորակը լավացնել, պետք ե դյուլացին ցանե ավելի շատ խոտաբույսեր և արմատապուղներ:

Կոլխոզները յեվ անհատական տնտեսություններն այլ խոտաբույսերի յեվ արմատապուղների ցանքնի համար վոչ մի հարկ չեն վճարում:

## ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆԵՐԻ ԱՆԱՍՈՒՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ ԼԱՎԱՅՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շատ միջոցներ կան կատարելագործելու անասնապահությունը: Այդ միջոցներն են կազմում անասունների կանոնադրությունը, մաքրությունը, ամառային կերը, վոր կերը, պահպանությունը, մեծացնելը, խնամքով վերաբերվելը, գուծագերի կանոնավոր մեծացնելը, զայաններ պատրաստելը և այլն:

Անասուններին բարելավող միջոցները և պայմանները կոչվում են «զոռմինիմում», վորը նույնպես կարեոր և կիրականակի մեջ, ինչպես վոր ազգությունների ե: Յուրաքանչեւ կատարելագործելում ե, թե կատարելագործության ի՞նչ չյուր ուայգործկոմ վորոշում ե, թե կոլխոզների և միջոցներ են հարկավոր ամեն մի վայրում թե կոլխոզների և թե անհատական տնտեսությունների համար: Յուրաքանչյուր ուայգործկոմ կազմում ե «զոռմինիմումի» պայմանների ցուցակը: Կոլխոզներն ու անհատական տնտեսությունները «զոռմինիմումի» իրագործման համար ստանում են արտօնություններ, այն ե՝ նրանց հարկը զիջվում ե 10 տոկոսով:

Անհատական ընտանիքներն այս զիջումը ստանում են այն դեպքում, յեթե «զոռմինիմումը» կիրառվում է համայնքի կամ զյուղի բոլոր տնտեսությունների կողմէց: Բոլորովին աշխատվում են հարկից ընտիր ցեղային անասունները և կոլխոզների արտաբերող անասունները, մերինոս և կարակուլ տփող վոչխարները և նրանց խառնածին սերունդը, կիսակոշտ բուրդ և պատություններում կոլխոզներում և անհատական տնտեսություններից:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒՑՈՒԹՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեխնիկական կուլտուրաները մեր արդյունաբերության գենսական մթերքներն են կազմում: Բամբակի, կանեփի, կթավատ, ձակնդեղ, սոյա—սրանք բավական արժեքավոր բույսեր են: Նրանցից պատրաստում են այն իրերը, վորոնք այժմ այնքան կարեռ են թե քաղաքին և թե գյուղին:

Այսպես որինակ, մեր բամբակի պակասության պատճառով մենք ստիպված ենք գնել արտասահմանում և վճարել վուկսվ, վորը բավականին թանգացնում ե մեր ասլրանքների արժեքը: Այդ պատճառով ահա անհրաժեշտ ե ընդարձակել բամբակի ցանքսի դաշտերը: Կթավատի, կանեփի մեծ պահանջ ե զգացվում վոչ միայն մեզանում, այլ և արտասահմանում: Կթավատի, կանեփի և ուրիշ նման կուլտուրաների փոխարեն մենք արտասահմանից ներմուծում, բերում ենք արակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ և զանազան կահավորություն մեր ֆաբրիկաների և գործարանների համար: Ուրեմն միանգամայն պարզ ե, վոր վորքան կարելի յե շատ պետք ե ցանել և լայնացնել տեխնիկական ցանքսերի տարածությունը:

Ճակնդեղից պատրաստում են շաքար: Մենք այժմ շաքարի պակասություն ենք կրում: Պարզ ե ուրեմն, վոր պետք ե շաքարի ճակնդեղի ցանքսերը ընդարձակել:

Անվիճելի յե, վոր այդ բոլոր տեխնիկական բույսերի ցանելը շատ և շատ ոգտավետ ե: Բացի դրանից, պետությունը գյուղացիներին ոգնելու համար գյուղատնտեսական հարկի նոր որենքով տալիս ե նրանց մեծ արտոնություններ և զիջումներ: Որինակ, բամբակի ցանքսերի յեկամուտը յերկու անգամ պակաս ե հաշվում, քան հացինը: Յեթե մի հեկտար հացի յեկամուտը վորոշված ե 100 ոռորդի, ուրեմն բամբակի համար հաշվում ե 50 ոռորդի:

Նույնպիսի արտօնություններ արգում են և այն տնտեսություններին, վորոնք վորոշ ուայոններում ցանում են կանեփի, կթավատ և վուշ: Իսկ այն կոմունաները, արտելները և

ընկերությունները, վորոնք համայնացրել են իրենց լծկան անսունները և ինվենտարը, ստանում են ևս 30 տոկ. զիջում կթավատի և կանեփի համար և 50 տոկ. զիջում — բամբակի համար:

Ճակնդեղի ցանքսերը միանգամայն աղատված են հարկումից բոլոր կոլյոզներում, չքավոր և միջակ տնտեսություններում:

Այս տարի անցյալ տարվա համեմատությամբ ծխախոտի և մախորկայի ցանքսերի տարածությունը ընդարձակելու համար տուրք և վերցվելու հողագործության յեկամտային նորմայով: Տեղական ծխախոտի և մախորկայի ցանքսի համար շտկած և բարելաված հողամասերը յերկու տարով աղատվում են հարկեց, իսկ մնացած հողամասերը՝ մի տարով:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏՐԱԿԱՆՆ ՑԱՆՔՍԻ ՀԱՄԱՐ

Հարկից բոլորովին աղատվում այն ցանքսերը, վոր կատարում և հասարակությունը զանազան ոգտակար նպատակներով: Որինակ՝ ցանքսերի անձեռնամխելի սերմացու պատրաստելու համար, պարենային կարիքների, մառների, գպրոցների, ուսումնական նպատակների, գյուղացիական փոխադարձ ողնության ընկերությունների համար և այլն:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ԾՆԸՆԻՄԻՑ ՎՆԱՍՎԱՃՆԵՐԻՆ

Որենքը հինգ տարով ամբողջովին աղատում ե հարկից այլիների և անչափահաս յերեխաների աշխատավորական տընտեսությունները, յեթե դրանց տերերը կուլակների գեմ կըռվելու պատճառով, սպանված են լինում կուլակների ձեռքով:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կ. ԲԱՆԱԿԻ ՃԱՓԱՅՈՂՆԵՐԻՆ, ՊԱՀԵՍՏԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ, ՀԱՃՄԱՆԴԱՅ-ՆԵՐԻՆ ՅԵՎ. ՌԱԶՄԱ-ՀՐԹԵՅԱՃԵԶ ՃԱՓԱՅՈՂՆԵՐԻՆ

Գյուղատնտեսական հարկի նոր որենքը մեծ արտօնություններին է:

թյուններ և տալիս կարմիր բանակայիններին և նրանց ընտանիքներեն։ Յեթե կարմիր բանակայինը կովառղի անդամ է, նրա բաժին յեկամուտը հարկումից միանգամայն ազատվում է։ Յենթաղընք, որինակ, 200 անդամ ունեցող կովառղի յեկամուտը կազմում է 10 հազար ոուրլի։ Ուրեմն ամեն մի ընչին ընկնում է 50 ոուրլի։ Յենթաղընք, վոր կովառղի անդամների մեջ կան 4 կարմիր բանակայիններ, ուրեմն չորս անդամները կունենան չորս անդամ 50 ոուրլի—200 ոուրլի յեկամուտ։ Որենքով այս 200 ոուրլին կովառղի ընդհանուր յեկամտից պակասեցվում է և կովառղը փոխանակ 10 հազար ոուրլու, հարկ և վճարում 9 հազար 800 ոուրլի։

Անհատական կարմիր բանակայինների տնտեսությունները նույնպես ոգտվում են այդ արտոնություններից։ Յեթե, որինակ, կարմիր բանակայինի անհատական տնտեսությանն ընկնում է 30 ոուրլի հարկ, դրանից պակասեցվում է մի յերրորդ մասն, այն ե՝ 10 ոուրլին և փոխանակ 30 ոուրլու, կարմիր բանակայինը հարկ և վճարում 20 ոուրլի։

Ավելի ևս մեծ զիջում է արվում, յեթե տնտեսությունը թույլ է։ Յենթաղընք կարմիր բանակայինի թույլ տնտեսությունը պիտի վճարի 15 ոուրլի հարկ. որենքով նա ստանում է 50 տոկոս զիջում և վճարում է շ ոուրլի 50 կոպ., իսկ այն կարմիր բանակայինների տնտեսությունները, վորոնց հարկը 10 ոուրլի յեկամուտ, բոլորովին ազատվում են հարկով և վոչ մի կոպեկ հարկ չեն վճարում։

Այս արտոնություններից հավասար կերպով ոգտվում են և հաշմանդամները, ոազմահրդեհաշեջ ծառայողներն ու նրանց ընտանիքները։

### ԸՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԵԲԱՑԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՎՆՍՎԱՃՆԵՐԻՆ

Յեթե տնտեսությունը վնասվել և կարկատից, հեղեղից, մորեխից և կամ ընկել ե ձին, կամ պատահել ե մի ուրիշ աղետ, պարզ ե, վոր այդ տնտեսության յեկամուտը պակասել է։ Այդպիսի ընտանիքներին որենքով արվում է զիջում։ Ուա-

յոնական հարկային հանձնաժողովները ի նկատի ունենալով տնտեսության թույլ կամ ուժեղ լինելը, ազատում են նրան հարկի մի մասից և կամ թե ամբողջովին։

Թույլ, սակավազոր ընտանիքներն ամբողջովին աղատվում են հարկից։ Իհարկե կուլակների ընտանիքները ինչպես մյուս բոլոր արտոնություններից, նույացես և այս արտոնությունից չեն ոգտվում։ Բոլոր արտոնությունները ստանում են միմիայն չքափոր և միջակ տնտեսությունները։

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՐԿՎՈՒՄ ՎՈԶ-ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒԽՆԵՐԻ

ԿՈՒՍՏԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՐԴԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵԿԱՄՈՒԽՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ամենից առաջ պետք է իմանալ, վոր վոչ յերկրագործական յեկամուտները, վորոնք ստացված են 1930 թ. մայիսի 1-ից հետո, այս տարի չեն հարկվում։ Ուրեմն հարկվում են միայն անցյալ տարվա վոչ յերկրագործական յեկամուտները։

Հարկը հաշվվում է վոչ թե ընդհանուր յեկամտից, այլ վառելիքի և վարձու բանվորների ու հումույթի ծախսերը հանած, մնացած յեկամտի վորոշ մասից։ Հարկված յեկամուտը 40 առկոսից պակաս և 60 տոկոսից վեր չպիտի լինի, այսինքն յեկամտի 1 ոուրլու 40—60 կոպեկն ե հարկվում, իսկ մնացած մասն ազատվում է հարկից։ Հարկման յենթակա յեկամտի չափը վորոշում են ոայգործկոմիները։

Յենթագրենք, որինակ դարենի ամբողջ յեկամուտը կազմում է 740 ոուրլի, իսկ դարբնի արհեստանոցային ծախսերը կազմում են 240 ոուրլի։ 740 ոուրլի ընդհանուր յեկամտից պակասեցվում են այս 240 ոուրլի արհեստանոցային ծախսերը և մնում է 500 ոուրլի։ Ի՞նչ չափով ե հարկվում այս մընացած 500 ոուրլին, այդ վորոշում է ոայգործկոմը։

Յենթագրենք թե ոայգործկոմը վորոշում է 40 առկոսով, հարկը հաշվվում է 200 ոուրլուց, 50 տոկ.—250 ոուրլուց և ամենաբարձրը 60 տոկ., հարկը հաշվվում է 300 ոուրլուց։

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Յեսթագրէնք միջակ անտեսությունը վարձով ե տվել մի  
ուրիշ գուղացու անտեսության զյուղատնտեսական մի բարդ  
մեքենա՝ հնձի կամ կալսելու համար։ Վարձու տված մեքենայի  
ամբողջ յեկամուտը չի հարկվում, այլ 1 քառորդից մինչև  
1 տասյերորդ մասը։ Իսկ արիշերները, զտիչ մեքենան, նույն-  
պես և մյուս բոլոր զյուղատնտեսական պարզ մեքենաները,  
ցանիչը, երնելու մեքենան և ուրիշ նման մեքենաները վար-  
ձով տված գեպքում չեն հարկվում։

## ՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Յեթե յեկամուտը ստացվում է վարձու աշխատանքից, հարկվում է նրա 15 տոկոսը: Յենթադրենք Խաթլամաջյանը կամ Լուսպարոնյանը տանից գուրս վարձու աշխատանքի գընալով, յեկամուտ է ստանում 300 ռուբլի: Հարկ է վճարում նա վոչ թե ամեն մի աշխատած ռուբլուց, վո՞չ, այլ ամեն մի 15 կոպեկից: Ուրեմն հարկ է վճարում նա վոչ թե 300 ռուբլուց, այլ 45 ռուբլուց: Իսկ Լուսպարոնյան Խաչեղբայրը տանից գուրս աշխատանքից յեկամուտ է ստանում նույնպես 300 ռուբլի, սակայն վոչ վարձու աշխատանքից, այդ գեղքում հարկվում է նրա յեկամտի 30 տոկոսը, այն ե՛ 90 ռուբլի: Այսինքն Խաթլամաջյանի հարկը կհաշվի: 45 ռուբլուց, իսկ Լուսպարոնյանինը—90 ռուբլուց:

Իսկ յեթե նրանք կոլխոզի անդամ են և 100 ռուբլի մըտցը ել են կոլխոզի գրամարկը, այդ գեպքում այդ 100 ռուբլին հարվիում ե կոլխոզի յեկամտի մեջ, ընդհանուր կարգով, իսկ նրանդ յեկամուտը 100 ռուբլով պակաս ե հաշվիում:

**U C R U S U Q U R 2 L**

Ամենաարտոնյալ կերպով հարկվում է աշխատավարձը:  
Յեսթաղբենք, որինակ, գյուղացու ընտանիքից Լուսպիկայոն  
Վարդգեն աշխատում է քաղաքում և իր մի տարվա ծառա-  
յությունից ստանում է 1200 ռուբլի աշխատավարձ։ Այս գու-

մարդ հարկվում է միայն 10 տոկոսով: Այսինքն 1200 ռուբլի աշխատավարձից հարկվում է 120 ռուբլին: Հազար և 80 ռուբլին ազատվում է հարկատվությունից: Իսկ յեթե լուսպիկայան վարդգեսն ապրում է վոչ թե քաղաքում, այլ գյուղում, իր ընտանիքում, այն ժամանակ նա հարկվում է 15 տոկոսով, այնինքն հարկը հաշվվում է վոչ թե վերոհիշյալ 120 ռուբլուց, այլ 180 ռուբլուց: Իսկ կուլակային ընտանիքների ստացած բոլոր յեկամուտները—թե տանից դուրս և թե այլ աշխատանքից—հարկվում են ամբողջովին:

ՀԱՐԿԻ ԿԵՍԸ-ԹԱՅՈՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՊԵՏՔԵՐԻՆ

Գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարն այս տարի պակաս կլինի, քան անցյալ տարի յեզ: Զնայած դրան, հարկի այն մասը, զորը ստացվում եր ռայոնի և գյուղի պետքերի համար, վոչ թե պակասում ե, այլ ընդհականուակը, ավելանում:

Անցյալ տարի ուայոնի և գյուղի տեղական պետքերին թողնված եր 40 տոկոս, այսինքն 100 ռուբլուց 40 ռուբլի: Նորուեկանքով այդ մասն ավելացրած ե: Բայցնի և գյուղի պետքերի համար 100 ռուբլուց տրվում է այժմ 45 ռուբլի կամ 45 տոկ.: Բացի դրանից, ժողոված գյուղատեսական հարկի մի վորոշ մասը շրջգործկոմիները կամ յերկրգործկոմիները նորից հատկացնում են ուայոնի և գյուղի պետքերի համար: Այսպես վոր ուայոնը վորքան հարկ ե վճարում, նրա 50 տոկ.—կեսը ստանում ե իր կարիքների, պետքերի համար: Այդ փողերով ուայզործկոմիները և գյուղխորհրդները կառուցում են և նորուեկանքով այլուր համար 100 ռուբլուց 40 ռուբլի: Կամուրջներ, ջրհորներ, գումարներ, այլն: Կողխոզնիկները, չքավորներն ու միջակները, նույնպես և անհատական տնտեսությունները պետք ե լավ իմանան, վոր նրանց վճարած հարկի ամեն մի ռուբլուց 50 կոպեկը մնում է իրենց ուայոնի, գյուղի, կողխոզի կարիքները հոգալու համար:

## ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՊԹԱԿՆԵՐԻՆ

ՅԵԹԵ ԿՈՂԽՈՊՆԵՐԸ ԳԱՂթում Են Նոր տեղեր, գաղթականությունը դեկավարող հաստատությունների համաձայնությամբ

ու ցուցմունքով, այդ գեպքում նրանք ազատվում են հարկից 3-ից մինչև 15 տարի ժամկետով:

Այդ ժամկետը կախված է նրանից, թե ինչ աշխատանքներ պիտի կատարեն գաղթականները նոր տեղերում, վորպեսզի կարգի գցեն տնտեսությունը և ինչ տեղ պիտի գաղթեն: Անհատական տնտեսությունները նույնպես գաղթելու դեպքում 3-ից մինչև 15 տարի ժամկետով ազատվում են հարկից: Ժամկետի այդ չափը կախված է գաղթելու ժամանակից, տեղից և այն աշխատանքներից, վոր տնտեսությունը պիտի կատարի նոր տեղում:

### ՊԱՏԵՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԹԱՎ-ՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՀՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հարկը վճարվում է մաս-մաս, զանազան տեղերում նշանակած վորոշ ժամանակներում, սկսած 1930 թվի սեպտեմբերի 1-ից մինչև 1931 թվի հունվարի 1-ը:

Կուլակային տնտեսությունները վճարում են ամբողջ հարկը մինչև այս տարվա հոկտեմբերի 1-ը:

Ով ժամանակին չի վճարում հարկը, նա տալիս ե տուգանք, իսկ հետո չվճարողի կայքը կարող ե ցուցակագրվել և ծախվել աճուրդով: Ով ցույց ե տալիս քիչ հող և անառուններ, կամ թագնում ե իր յեկամտի ուրիշ աղբյուրները, նա տուգանք ե վճարում և մինչև իսկ յենթարկվում ե քրեական պատարխանատվության:

### ԳՅՈՒՂԱՏԵՍԽԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԵՍՈՒՄ

Զնայած 1929-30 ընթացիկ տարվա գյուղատնտեսական հարկի զգալի պակասելուն 1928-29 թվի համեմատ, յեկող տարի հարկը վոչ թե կավելանա, այլ ընդհակառակը, նորից կապահով և այն ել դարձյալ զգալի չափով:

Մոտավորապես հաշված 35 միլիոնի փոխարեն, վոր ժո-

ղովանում է ներկա 1929-30 տարում մեր Հյուսիսային կովկասում, 1930-31 թվին հավանական է, վոր մենք կժողովենք վոչ ավելի, քան 22-23 միլիոն ոտքի:

Մի խոսքով, բոլոր այն արտօնությունները, վորոնք սահմանված են նոր որենքով, կյանքի մեջ կիրառվելով, պիտի նպաստեն մեր յերկրամասում գյուղատնտեսական հարկի սոցիալ-հասարակական նպատակների իրականացման, այն ե՝ կուցիոնների և սովորողների ընդարձակվելուն և կուլակային մասնակին վերջնականապես հարգածելուն: Այս հանգամանքը ցորդներին վերջնականապես հարգածելուն, Այս հանգամանքը պիտի տա մեզ հարկի պակասելը մեր յերկրամասում 40 տոպիտի տա մեզ հարկի պակասելը մեր յերկրամասում 40 տոպիտի Այստեղից պարզ է, վոր այն բոլոր ասեկուեները, վոր կոսով: Այստեղից պարզ է, վոր այն բոլոր ասեկուեները, վոր թե մենք յերկրագործության յեկամտի և հողագործության հատուկ բնագավառների յեկամտի նորմաները բարձրացնելով, նպատակ ունենք հարկը բարձրացնել և ծանրացնել—միանգամայն անհիմն են և անմիտ:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքն առանձին նշանակություն ունի Հյուսիսային կովկասի համար: Հյուսիսակամատարած կուլեկտիվացման ռայոն ե, հայտափառակային տընտեսության, արդյունաբերական, անամսապահության ռայոն, տեսլական, արդյունաբերական, անկայական պերսվորոնց հետ միասին աճում ե իր ապագա հակայական պեկսիվով բամբակագործությունը, բանջարաբուծությունը և ծխախոտագործությունը:

Մեր յերկրամասը, շնորհիվ համատարած կուլեկտիվացման գյուղատնտեսության բազմապիսի գործունեության (յերկրագործության, անամսապահության, տեխնիկական կուլետընաների և այլն), ավելի քան խորհրդային յերկրի մի վորեւյերկրամաս, ոգտվում ե գյուղատնտեսական հարկի տված բոլոր արտօնություններից: Մեր յերկրամասի աշխատավորությունն, ավելի քան մի ուրիշ յերկրամասի, պիտի գիտակցել և թյունն, ավելի քան մի ուրիշ յերկրամասի, պիտի գիտակցել և կապահով զգացման հարկի հետագա ավելի ևս մեծ պահանջանական թեթեացնելը չքավոր-միջակ տնտեսությունների համար, վորը առաջ ե գալիս այն բոլոր փոփոխություններից, վոր գյուղատնտեսական հարկի նոր որենքը փոխարերել ե րից, վոր գյուղատնտեսական հարկի սիստեմի մեջ: Բոլոր այն առավելությունները, վոր ստանում ե մեր յերկրամասը—Հյուսիսային կովկասը,

հարկադրում և պարտավորեցնում են կրկնապատկել և յեռապատկել բատրակ, չքավոր և միջակ լայն մասսաների յեռանզը, մեր գյուղատնտեսությունը բարձրացնելու համար, ավելի ևս զարգացնելու և ամրացնելու կուեկտիվացումը և լիկվիդացիայի յենթարկելու կուլակին վորպես դասակարգի:

Բատրակ, չքավոր և միջակ մասսաներին պետք է համախմբել կուսակցության և Խորհրդային իշխանության շուրջը, հսկա թափով առաջ տանելու մեր յերկրի սոցիալիստական շինարարությունը:

Հետևողական կերպով տանելով դասակարգային գիծը և անողոք կերպով կովելով դասակարգային ամեն տեսակ շեղումների գեմ, գյուղատնտեսական նոր հարկը կիրառելով, մենք կունենանք նոր հաջողություններ գյուղատնտեսության սոցիալիստական վերաշինության շրջանում և ավելի ևս կամրացնենք բանվոր դասակարգի արդյունաբերական կապը գյուղական հիմնական մասսաների հետ:

## Բ Ա Վ Ա Ն Գ Ե Ր Ա Ւ Թ Յ Ա Խ Ե Ր

- |   |    |
|---|----|
| 1. Գյուղատնտեսական միասնական հարկը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը . . . . .                       | 4  |
| 2. Նոր որենքի հիմնական խողիքները . . . . .  | 6  |
| 3. Ինչու համար և պետք միասնական գյուղատնտեսական հարկը . . . . .   | 15 |
| 4. Վերակառուցել և բարձրացնել գյուղատնտեսությունը . . . . .  | 16 |
| 5. Ի՞նչքան ենք ծախսում մենք մեր կուլտուրական պետքերի համար . . . . .  | 17 |
| 6. Վերտեղից և մեր պետությունը ստանում այդ մեծամեծ գումարները . . . . .  | 17 |
| 7. Ինչու և ի՞նչպես և վոփոխվում գյուղատնտեսական միասնական հարկը . . . . .  | 21 |
| 8. Գյուղատնտեսական հարկը դասակարգային հարկ և . . . . .  | 22 |
| 9. Կուլակին պետք և անխնա հարվածել . . . . .   | 23 |
| 10. Կուլակին հարվածենք հարկատվությամբ . . . . .   | 27 |
| 11. Ո՞վեր են ազատավում հարկից . . . . .   | 28 |
| 12. Ինչու յե Խորհրդային իշխանությունն ոգնում և արտօնություններ տալիս կոլխոզներին . . . . .                          | 29 |
| 13. Ի՞նչ և համեմատական հարկումը . . . . .   | 30 |
| 14. Ի՞նչպես են հարկվում ընկերությունները, արտելները և կոմունաները . . . . .   | 31 |
| 15. Վեր կոլխոզներն են ազատվում հարկից . . . . .   | 32 |
| 16. Գյուղատնտեսական հարկը գյուղատնտեսության բարդավաճան համար . . . . .  | 33 |
| 17. Արտօնություններ բազմանդամ ընտանիքներին . . . . .  | 35 |
| 18. Արտօնություններ թույլ կոլխոզներին և այն կոլխոզներին, վորոնք իրենց մեջ են առնում թույլ տնտեսություններ . . . . . | 36 |
| 19. Արտօնություններ ցանքսերի տարածությունն ընդարձակելու համար . . . . .   | 36 |
| 20. Այն տնտեսությունները, վորոնք կրծատել են իրենց ցանքսերի տարածությունը, հարկվում են անցալ տարվա չափով . . . . .   | 37 |

21.	Արտօնություններ անմշակ հողերը ցանելու համար . . . . .	38
22.	Արտօնություններ բերքի բարձրացման համար . . . . .	38
23.	Գյուղատնտեսական հարկը կողմակից բազմադաշտային ցանք-սափոխության . . . . .	40
24.	Արտօնություններ կոլխոզներին և կոլխոզնիկներին, առողջապահության, բանջարանոցների և գնացան կուլտուրաների համար . . . . .	41
25.	Արտօնություններ անհատական տնտեսություններին անսանապահության համար . . . . .	43
26.	Որեւէքով բոլորովին աղատվում են հորկից խոտաբույսերի ու կերի արմատապտուղների հողամասերը . . . . .	44
27.	Արտօնություններ անսառուների տեսակը լավացնելու համար . . . . .	45
28.	Արտօնություններ տեխնիկական կուլտուրաների համար . . . . .	46
29.	Արտօնություններ հասարակական ցանքսերի համար . . . . .	46
30.	Արտօնություններ կուլտակների ճնշումից վնասվածներին . . . . .	46
31.	Արտօնություններ կարմիր բանակի ծառայողներին, պահապահի կարմիր բանակայիններին, հաշմանդամներին և ռազմահրեհնաշեց ծառայողներին . . . . .	46
32.	Արտօնություններ տարերային աղետներից վնասվածներին . . . . .	48
33.	Խօնչական հորկվում վոչ յերկրագործական յեկամուտները . . . . .	49
34.	Գյուղատնտեսական մեքենաները . . . . .	50
35.	Տանից դուրս յեկամուտները . . . . .	50
36.	Աշխատավարձը . . . . .	50
37.	Հարկի կեսը ռայոնի տեղական պետքերին . . . . .	51
38.	Արտօնություններ գաղթականներին . . . . .	51
39.	Պատասխանատվություն յեկամուտները թագցնելու և չվճարելու համար . . . . .	52
40.	Գյուղու տնտեսական հարկը Հյուսիսային Կովկասում . . . . .	52

«Ազգային գրադարան»



NL0210302



21

C 31-K  
1100  
646

ԳՐԱՆ Ե 10 ԿՈՂԵԿ